գումարը, լիովին զիտակցելով միութեան հսկայական
նվաճումներն ինչպես ԼԿՅԵՄ կազմակերպչական քա-
ղաքականութեան բնագավառում—միութեան սոցիա-
լական կազմի բարելավումը, բանվոր և բաւարակ յե-
րիտասարդութեան ներգրավումն ու կուլակային տար-
րերից միութեան գտումը, նույնպես և միութեան ամ-
բողջ աշխատանքի ընդհանուր աշխուժացման բնագա-
վառում—աշխատանքի նոր ձևերի կիրառումը, հսկա-
պրոլետարական արամադրությունների դեմ մղվող
պայքարի ուժեղացումը և այլն, — առաջարկում է, վոր-
պես նացիոնալիզմի դեմ մղվող պայքարի վերաբերյալ
ընդհանուր գիրեկտիվ, հետևյալ միջոցները.

ա) Ամեն կերպ խորացնել պրոլետարական ին-
տերնացիոնալիզմի պրոպագանդը: Բավականաչափ խո-
րը ծանոթություն տալ մեր չերիտասարդութեանը մի-
ջազգային պրոլետարիատի և նրա չերիտասարդութեան
կյանքի ու պայքարի մասին, աշխատելով հասնել այն-
պիսի դրութեան, վոր մեր չերիտասարդությունը կեն-
դանի արձագանգ տա և գոծնականապես աւտիվ կեր-
պով աշակցի կապիտալիստական չերկրների պրոլե-
տարական չերիտասարդութեան բոլոր չելուլթներին:
Այս նպատակով հարկավոր է աշխուժացնել միութեան
միջազգային կապի բոլոր ձևերը—ԼԿՅԵՄ բջիջների
գրավոր կապը, շեֆութեան, պատվիրակությունների
հրավիրում, միջազգային նյութական ոգնություն
(интернациональный гривенник), չերիտասարդու-
թեան ներգրավումը ՄՈՊՐ-ի կազմակերպություննե-

րի մեջ և ամեն կերպ վերջինիս գործունեյութեան ու-
ժեղացումը, զանազան չերկրների չերիտասարդական
շարժման պատմութեան ուսումնասիրութեան խմբակ-
ներ և այլն:

բ) Լայնորեն ծավալել դաստիարակչական աշ-
խատանքը՝ յուրացնելու Անդրկովկասյան Ֆեդերա-
ցիայի հիմունքները, վորպես պրոլետարական ինտեր-
նացիոնալիզմի արտահայտություն Անդրկովկասի աշ-
խատավոր ժողովուրդների յեղբայրութեան, ուղղված
ընդդէմ և՛ վրացական, և՛ ադրբեջանյան, և՛ հայկական
բուրժուազիայի, կալվածատերերի ու նրանց կուսա-
կցություններին:

գ) Պատշաճ բարձրութեան վրա դնել միութեան
անդամների ծանոթացումը խորհրդային իշխանութեան
ազգային քաղաքականութեան հիմունքներին, ոգտա-
գործելով այդ նպատակով Անդրկովկասյան Ֆեդերա-
ցիայի որինակը:

դ) Սիստեմատիկ դարձնել Անդրկովկասյան ԼԿՅԵՄ
կազմակերպությունների միջև նրանց փորձերի փո-
խանակումը, յայնորեն ծավալելով միութեան մեջ այդ
փորձի պրոպագանդը: Ամեն կերպ խրախուսել լեզու-
ներ, մանավանդ ռուսաց լեզու սովորելու համար կա-
մավոր խմբակներ կազմակերպելը:

ե) Զգտել, վորպեսզի մեր տնտեսական ու կուլ-
տուրական շինարարութեան խնդիրներն այնպես հաս-
կացվեն և այնպես լուծվեն, վորպեսզի մեր յուրաքան-
չյուր քայլն էլ ամէլի ամրացնի Անդրկովկասյան Ֆե-
դերացիայի հիմքերը:

Կոմյերիտմիութեան ամբողջութեամբ առած,
ինչպես և յուրաքանչյուր անհատ կոմյերիտական,

պետք է դառնա ԱՍՖՈՀ հիմքերի հետագա ամրացման համար պայքարող ակտիվ մարտիկ, պետք է աշակուրջ հետեի և հակահարված տա ԱՍՖՈՀ անասանության դեմ ուղղված բոլոր տենդենցներին:

դ) Հատուկ ուշադրութեամբ պետք է դարձնել միութեան ազգային փոքրամասնութեան ներքին շրջանում կատարվող աշխատանքների վրա: Պետք է ջանք թափել հասնելու մի դրութեան, վորպեսզի կոմյունիստականների ամբողջ մասսան հասկանա, վոր մեզ մոտ, Անդրկովկասում և մասնավորապես Հայաստանում, ազգային հարցը նշանակալի չափով «խոշոր» ազգութիւնների հարաբերութեան հարցն է դեպի ազգային փոքրամասնութիւնները: Այս բնագավառում միութեանական աշխատանքի թուլութիւնը բնավ չի նպաստում յերիտասարդութեան ինտեռնացիոնալ դաստիարակութեանը: Համագումարն արձանագրում է, վոր անհրաժեշտ է ամենաուշադիր կերպով սպասարկել ազգային փոքրամասնութիւնների աշխատավոր յերիտասարդութեան կուլտուր-կենցաղային կարիքները:

է) Թիւութեան ծավալուն պայքարն՝ աշխատավոր յերիտասարդութեան վրա ազդելու՝ նացիոնալիզմի փորձերի դեմ, պահանջում է անխնա մերկացնել նացիոնալիզմի կրողներին տնտեսական, քաղաքական, իդեոլոգիական բնույթի կոնկրետ փաստերով, չթույլատրելով վորեւէ թողութիւն (попустительство) այս ասպարիզում:

ը) Նույնպէս ուսուցման կարգով պետք է լայնորեն ծանոթացնել յերիտասարդութիւնը բալչեկական կուսակցութեան այն պատմական փորձի հետ,

վոր ունի նա նացիոնալիզմի դեմ պայքարելու գործում, մանավանդ մեզ մոտ, Անդրկովկասում:

III

Ծավալուն պայքարն իդեոլոգիական ճակատում, պայքարն անհարադատ ազդեցութիւնների դեմ և յերիտասարդութեան կոմունիստական դաստիարակութիւնը պահանջում են կազմակերպութեան այնպիսի ձև, վորպեսզի բուն իդեոլոգիական փորձերի հարցերը սերտսրեն կապակցվեն աշխատավոր յերիտասարդութեան կշանքի, կենցաղի, սոցիալիստական շինարարութեան մասնակցելու պրակտիկայի հետ, վորովհետև յերիտասարդութիւնը նվաճելու համար կատարի պայքարը մղվում է հատկապես նաև արդյունաբերութեան ուսցիոնալացման պրակտիկայի մեջ, արտադրական դիսցիպլինայի բարձրացման, գյուղատնտեսութեան կոլլեկտիվացման գործում, անհատական գյուղացիական տնտեսութիւնները խոշոր կոլլեկտիվների վերածելու գործում և այլն:

Անհրաժեշտ ջանք թափել ամեն կերպ ամրացնելու յիւթեանական աշխատանքների նոր ձևերը (արտադրական մրցականչեր, մրցութիւն, կամավոր խմբակներ, թեթև հեծեկազոր և այլն), վորոնք գործնական հողի վրա և իր ամբողջ հասակով են դնում միութեանական աշխատանքը սոցիալիստական արտադրութեան անմիջական պահանջներին մոտեցնելու և ծավալուն ինքնաքննադատութեան հիմունքներով կոմյունիստականներին ու անկուսակցական աշխատավոր յերիտասարդութիւնը լայնորեն նրա մեջ ներգրավելու խնդիրը:

Այս նպատակով համագումարն անհրաժեշտ է գտնում հետևյալը.

1. Բարձրացնել միության տնտեսական-կենցաղային աշխատանքի վորակը, հիշելով, վոր մեր պայմաններում, յերբ գործադրությունն առանձնապես հարվածում է յերիտասարդությանը, մի շարք թերությունների հետևանքով ամենուրեք վատ է դրված արհեստակցական կրթությունը, բանվոր յերիտասարդության վորակավորվելու գործը, յիրբ արդյունաբերության ռացիոնալացման պրակտիկայում հաղվադեպ չեն մեր քաղաքականության աղավաղման փաստերը, բանվոր յերիտասարդության տնտեսական-կենցաղային պահանջները պաշտպանելը վուչ միայն միջոց է՝ կազմակերպելու բանվոր յերիտասարդությունը, այլ և՛ անմիջականորեն բղխում է յերկրի ինդուստրիացման մեր պլանից, հանդիսանում է նրա կյան մասը:

Բանվոր յերիտասարդության ցնցեստական շաների պաշտպանությունը կուսակցության ֆլած դիրեկտիվի կատարումն է՝ յերկրի ինդուստրիացման համար վորակյալ բանվորական կադրեր պատրաստելու մասին:

2. Բատրակ յերիտասարդության—գյուղատնտեսության այդ պրոլետարների տնտեսական շահերի պաշտպանության գործը թույլ է, թեև նրանք բնականաբար ավելի յեն կարոտ պաշտպանության: Գյուղատնտեսության բարձրացման, նրա կոլլեկտիվացման և մեքենայացման խնդիրը չի կարող ամբողջովին լուծվել առանց գյուղատնտեսական բանվորների աշխատեցական-կենցաղային մակարդակի բարձրացման, իսկ այդ բանվորների նշանակալի մասը կազմում է

բատրակ յերիտասարդությունը: Այս պատճառով գյուղական բջիջի հիմնական հարցերից մեկն էլ պետք է դառնա բատրակ յերիտասարդության մասին հոգալը:

3. ԼԿՅԵՄ իր ուշադրության կենտրոնում պետք է ունենա միութենական աշխատանքի նոր ձևերը, ամեն կերպ ճշտորոշի և ամրացնի այդ ձևերը: Անհրաժեշտ է ջանալ, վորպեսզի յուրաքանչյուր կոմյերիտական խորը գիտակցի այդ ձևերի սկզբունքային նշանակությունը, վորոնք վերականուցում են կոմյերիտական աշխատանքի ամբողջ սխատեմը, վերջնականապես վերացնում են ուսուցման և պրակտիկայի միջև դեռևս մինչ այժմ գոյություն ունեցող կտրվածությունը:

Այս վերականուցումը, նո՛ւ ձևով կատարվող այս աշխատանքն անմիջականորեն բղխում է մեր զարգացման նորագույն ետապից, և նրա ելությունն ալն է, վոր ԼԿՅԵՄ աշխատում է իր աշխատանքի առանցքը դարձնել կազմակերպված իրագործումն այն ձեռնարկումների, վորոնց նպատակն է իրականացնել մեր յերկրի սոցիալիստական վերականուցման կողմն ուղղված գլխավոր գիծը:

Աշխատանքի այդպիսի կազմակերպությունը և՛ իդեոլոգիական ճակատում մղվող պայքարում հաջողություն ունենալու տեսակետից, և՛ յերիտասարդության կոմմունիստական դաստիարակության տեսակետից ունի անկասկածելի առավելություններ, վորովհետև այստեղ, պայքարի այս ճակատամասում և կուսակցության հիմնական ձեռնարկումների շուրջն է տեղի ունենում գլխավոր ճակատամարտը:

Միութենական աշխատանքի նոր ձևերը պետք է դիտել վորպես ձևեր, վորոնք մերկացնում են մեղ

թշնամի իդեոլոգիաների կոնկրետ արտահայտիչներին, նշանակալի չափով հեշտացնելով պայքարը և ոգնելով չերիտասարդութիւնը՝ կուտակելու դասակարգային պայքարի փորձ:

Մեր աշխատանքի կարևոր բնագավառն է խորհրդային դպրոցը: Դպրոցի հարցը դրվում է, սերտորեն կապակցվելով չերկրում նոր կադրերի աճող պահանջին. կադրեր, վորոնք անհրաժեշտ են ինչպես արդյունաբերութեան ու գյուղատնտեսութեան, նույնպես և մեր կուլտուրական շինարարութեան բազմազան ասպարեզների համար: Մեր դպրոցները դեռևս հեռու յեն այդ հարցերը լիովին իրագործելուց: Դպրոցների (մանավանդ 2-րդ աստիճանի) կտրվածութիւնն ընդհանուր կշանքից, սովորողների սոցիալական կազմի բավարար չլինելը, սոցիալապես մեզ մոտիկ կանգնած տարրերի նշութական անկայուն զրութիւնը դպրոցում, ուսուցչութեան մեջ կոմյերիտական-կուսակցականների փոքր շերտը, իդեոլոգիապես խորթ տարրերի գոյութիւնն ուսուցչութեան մեջ, ուսուցչական կադրերի խոշոր մեծամասնութեան թույլ մանկավարժական պատրաստութիւնը (խոսքը խորհրդային մանկավարժութեան պահանջներին համապատասխանող պատրաստութեան մասին է) միութեան առջև դնում են մի շարք լուրջ խնդիրներ՝ խորհրդային դպրոցի լիակատար նվաճման գործում:

Հայաստանի ԼԿՅԵՄ 6-րդ համագումարը, նշելով կոմյերիտական կազմակերպութիւնների աշխատանքի թույլ լինելը դպրոցում, չերբեմն անտակտ, վոչ ճիշտ վերաբերմունքը դեպի ուսուցչութիւնը և աշակերտական կազմի սոցիալական կարգավորման հարցերը, առաջարկում է.

1. Վերացնել միութեան շարքերից անվստահութիւնը դեպի մեզ մոտիկ ուսուցչութիւնը, վորն անպայման հսկայական մեծամասնութիւնն է կազմում Հայաստանի ուսուցչական կադրերի մեջ, ավելի սերտ կապ հաստատել այդ կադրերի հետ, ուժեղացնել միութեանական աշխատանքը նրանց մեջ, ամեն կերպ նպաստել նրանց վորակի բարձրացմանը և նրանց ներգրավմանը հասարակական աշխատանքների մեջ:

2. Ընտրել ակտիվ կոմյերիտականներին և ուղարկել մանկավարժական դպրոցները: Այս տարի ուղարկել մանկավարժական տեխնիկոմները (վերոհիշյալ ընտրութեան կարգով) վոչ պակաս 100 կոմյերիտականից և Յերևանի Համալսարանի մանկավարժական ֆակուլտեն՝ 25 մարդ ընտրյալ, առաջադեմ, զըլխավորապես ակտիվիստ կոմյերիտականներից:

3. Առավելագոյն ուշադրութիւն դարձնել բանվոր, չքավոր և բատրակ չերիտասարդութիւնը այս տարվա ընդունելութիւնների ժամանակ դպրոցական հաստատութիւնները ներգրավելու վրա: Այս նպատակով վաղորոք զբաղվել արդի չերիտասարդութեան ընտրութեան և պատրաստման հարցերով՝ նրանց զըլրոց ընդունել տալու համար:

Աշխատանք ծավալել՝ տեղծելու դպրոցական ֆոնդեր և առհասարակ նշութական նախադրյալներ, վորպեսզի այդ չերիտասարդութիւնը կարողանա զըլրոցում մնալ: Հանձնարարել Կենտկոմին մշակելու պրոլետարական ուսանողութեան աջակցութեան հատուկ կոմյերիտական ստիպենդիալի ֆոնդ ստեղծելու հարցը:

Վճռական պայքար մղել կոմյերիտականների մի մասի մեջ՝ դեպի միջակ չերիտասարդութիւնը նկատ-

վող առանձին անառողջ տրամադրութիւնների դեմ:

4. Միութենական մասսաները լայնորեն ծանոթացնել ժողովրդական լուսավորութեան խորհրդային սկզբունքներին. լայն ժողովներում քննարկել ժողովրդական կրթութեան սխտեմի հարցերը և ընդհանուր նախնական (տարրական) կրթութեան նախագծերը:

5. Լավացնել կոմյերիտական բջիջի աշխատանքի վորակը դպրոցում ինչպես իրոք ինտերնացիոնալ և դասակարգային դպրոցի շինարարութեանը գործնական աշակցութիւն ցույց տալու, այնպես էլ արտադրողական աշխատանքն աշակերտութեան և ուսուցչութեան մեջ ծավալելու գծով: Վերջինս պետք է լրացնի ուսումնական աշխատանքի թերութիւնները, գլխավորապես իդեոլոգիականի գծով, դպրոցում գոյութիւն ունեցող մանր-բուրժուական, նացիոնալիստական և այլ հակապրոլետարական տրամադրութիւնները հաղթահարելու գործում:

6. Հատուկ ուշադրութիւն դարձնել պիոներական աշխատանքի վրա տարրական դպրոցում: Շատ բանով այս աշխատանքի վորակից է կախված լինելու մանր-բուրժուական սովորքների վերջնական հաղթահարումը նաև աշակերտութեան մեծահասակ խմբերի մեջ:

7. Ամեն կերպ ուժեղացնել ԼԿՅԵՄ կոմիտեների ղեկավարութիւնը դպրոցական բջիջների նկատմամբ: Ավելի ակտիվ մասնակցել ուսումնական գրականութիւն կազմելու և առանձնապես հասարակական դիսքիպլինների ուսուցման գործում:

Վ

1. Պրոլետարական իդեոլոգիայի, պրոլետարական աշխարհագրացողութեան համար մղվող պայքարը չի կարող սահմանափակվել արտադրութեան, գյուղի և դպրոցի շրջանակներով: Այդ պայքարը պետք է շարունակել նաև այն սփերայում, վոր կազմում է յերիտասարդութեան ազատ ժամանակը: Նա պետք է ընդգրկի նաև այսպես կոչված անձնական կյանքը, վերաբերմունքը դեպի ընկերները, դեպի իր աշխատանքը, դեպի այսպես կոչված մորալը կամ բարոյական նորմաները:

Հիմնականում բոլոր այդ «նորմաները» կազմվում են իմացութեան այն տարրերից, վոր ձեռք է բերում յերիտասարդութիւնը սոցիալիստական շինարարութեան (արդշտարեութիւն, գյուղ, դպրոց) մեջ ունեցած իր անմիջական մասնակցութեան պրակտիկայով, սակայն այստեղ ավելի, քան վորևէ ուրիշ տեղ, ուժեղ են ինչպես անցյալի աղքեցութիւնների մնացորդները — հին ուժը, նույնպես և յերիտասարդութեան շրջանը թափանցող նեպական փողոցի անհարազատ տրամադրութիւնները:

Հիմնական հիմնադրային յերևույթներ պետք է համարել յերիտասարդութեան շարքերում գոյութիւն ունեցող հետեյալ յերևույթները.

ա) Իճգիվիդուալիզմ. այս յերևույթը բավական լայն կերպով է տարածված յերիտասարդութեան մեջ, իր կողմերն ունի նաև ԼԿՅԵՄ շարքերում. դրա արտահայտութիւններն են՝ վոչ ընկերական վերաբերմունքը, պարծենկոտութիւնը, ինքնասիրահարու-

թյունը, շփվել չկարողանալը, ինքնապարփակումը, կարեբեխյամը, անձնական շահերի գերադասությունը, գոռոզությունը և այլն.

բ) սեռական սանձարձակությունը, հարբեցողությունը, խուլիգանությունը, արհամարհական վերաբերմունքը, անտարբերությունը (ինդիֆերենտիզմ), հեռանկարները կորցնելը և անկումային տրամադրությունները:

Այս խմբի մարդկանց մեջ դասակարգային շահերի գիտակցությունը մթադնված է. նրանք չեն պատկանում այն յերիտասարդների թվին, վորոնց «կյանքի վողջ նպատակն այս (այսինքն, սոցիալիստական) հասարակության կառուցումն է» (Լենին):

Փոքր ինչ այլ կարգի «հիվանդություններ» են հին կենցաղի մնացորդները, մեր կուլտուրական ընդհանուր հետամնացությունը, տեղ-տեղ դեռևս գոյություն ունեցող իրավագրկությունը և դրա հետ կապված նողկալի յերևույթները, ալքուրենական անգրագիտությունը, սնապաշտությունները, նախապաշարունակները, կախարդության հավատալը, կրոնական մոլությունը, վալլենի սովորքները և նախկապիտալիստական ժամանակներից մնացած տրադիցիաները: Ահա այս կարգի ազդեցությունների յենթակա մարդկանց շրջանում է, վոր յերիտասարդության հակակոմունիստական կազմակերպությունները կարող են վորս անել և ուժեր հավաքել:

Հիմնականում «նոր կենցաղի» համար մղվող պայքարը պետք է ընթանա կուլտուրական հեղափոխության լայն ծավալման գծով: Հայաստանի ԼԿՅԵՄ VI համագումարը, նշելով ԼԿՅԵՄ առաջին հաջողու-

թյուններն այս ասպարիզում (կուլտարչավ սնգրագիտության դեմ, վորը կյանքի կոչեց լայն մասսայական նախաձեռնություն), անհրաժեշտ է գտնում հետևյալը.

ա) ծավալել կոմերիտական լայն նախաձեռնություն՝ պայքարելու հին կենցաղի մնացորդների դեմ. ստեղծել կամավորական խմբակներ՝ պայքարելու հարբեցողության, անգրագիտության և այլ բացասական յերևույթների դեմ.

բ) պատշաճ բարձրության վրա դնել հակակրոնական պայքարի աշխատանքը, աշխուժացնել անասովածների ընկերության աշխատանքը, ամեն կերպ խորացնել հակակրոնական պրոպագանդը, վճռականապես խուսափելով ներգործության վարչական միջոցներից.

գ) անգրագիտության դեմ կազմակերպված արշավի ձևով մշակել անկուլտուրականության դեմ միշտ բարձրագույն կազմակերպելու հարցը.

դ) սխտեմի վերածել առանձին հիվանդադին կենցաղային յերևույթների վերաբերյալ մասսայական դատերի կազմակերպությունը.

ե) ուժեղացնել մասսայական ագիտացիոն դատարակչական աշխատանքը յերիտասարդության ամենահետամնաց խավերում, մշակել դրանց հասարակական ակտիվության ուժեղացման և հանրոգուտ աշխատանքի ասպարեզ ներգրավելու նոր ձեռնարկումներ:

զ) նույն այդ նպատակներով աշխուժացնել և ամրապնդել յերիտասարդության ազատ ժամերի կազմակերպման աշխատանքի հին ձևերը—սպորտն ու խաղը, բանակումներին յերիտ. սեկցիաների աշխա-

տանքը, ռադիոսիւրությանը, խրճիթ-ընթերցարան-
ները, տուրիզմը և այլն:

V1

«Նոր կենցաղի», յերիտասարդության կոմմունիստական դատարարակության համար մղվող պայքարի կարևոր դէնք պետք է հանդիսանա արվեստը: Սակայն մասսայի վրա գորեղ ազդեցութիւն գործելու այս բնագավառում նացիոնալիստական և պրոլետարիատին անհարազատ այլ իդէոլոգիաները դեռևս վորոշ ուժեղ դիրքեր ունեն գրաված:

Մյուս կողմից ել նոր արվեստի (նույնպես և հնի) քննադատութիւնը մեր կողմից դեռ չափազանց թույլ է: Կոմյերիտական թերթում բիբլիոգրաֆիայի (գրախոսության) բաժին բնավ չկա, վորը պետք է թերթի մեծ պակասութիւնը համարել: Գոյութիւն ունեցող քննադատության մեջ ել տեղ է դառնում նաև յուրահատուկ աջ թեքումը: Այս թեքումը հիմնականում արտահայտվում է նրանով, վոր քննադատը քողարկում է այս կամ այն գործում չեղած՝ պրոլետարիատին անհարազատ տարրերը և տարվում է միայն արտաքին ձևով: Այդպիսի քննադատութիւնը մոռանում է արվեստի վերաբերմամբ կուսակցության ընդունած կրիտերիումը, արվեստին տրված բնորոշումը՝ «ազգային իր ձևով և միջազգային՝ իր բովանդակութեամբ»:

Սրա հետ միասին մեր գրաքննադատության մեջ դեռևս նկատելի չափով տեղ է գրավում միամիտ սխեմատիզմը, «շտամպը», գյուղին սովորեցնել չկարողանալը և քննադատության անհասունության այլ չերեւելիքներ:

ԼԿՅԵՄ աշխատանքն տրվեստի համար մղվող պայքարում տակավին ծավալված չէ: Կինոն, թատրոնը, գեղարվեստական գրականութիւնը տակավին բավականաչափ չեն զբաղեցնում կոմյերիտական կազմակերպութիւններին:

Նկատի ունենալով այդ աշխատանքի ամբողջ կարևորութիւնը, համագումարն առաջարկում է.

ա) Ամեն կերպ խրախուսել և զարգացնել չերիտասարդության ինքնագործունեյութիւնը գեղարվեստական ստեղծագործության ասպարիզում (յերաժշտական, չերգեցողության, թատերական, արվեստի, գրական և այլ կամավոր խմբակներ):

բ) Կազմակերպել չերիտասարդության լայն մասնակցութիւն արվեստի ասպարիզում անհարազատ ազդեցութիւններ ղեմ պայքարելու գործում: Դռնբաց ժողովներում քննարկել արվեստի զանազան ճյուղերին պատկանող գործեր՝ կինո-նկարներ, թատերական բեմադրութիւններ, գեղարվեստական նկարներ, գրական գործեր և այլն: Մերկացնել չերիտասարդության առջև արվեստի բնագավառում նկատվող նացիոնալիստական, ինդիվիդուալիստական և այլ՝ մեղ անհարազատ չերեւելիքներ:

գ) Մամուլի միջոցով և նախաձեռնող խմբակներ ի ժողովներում գործնականորեն ցույց տալ մեր չերիտասարդությանը «հինց մեղ ժառանգութիւն մնացած արժեքների գործնական վերամշակման» իմաստը:

դ) Հատուկ ուշադրութիւն դարձնել չերիտասարդության ստեղծագործ ուժերն արվեստի զանազան բնագավառներ մղելու գործի վրա—նոր կադրերի պատրաստում թատրոնի, կինոյի, չերաժշտության, գե-

դարվեստական գրականություն և արվեստի այլ տարբերակների համար:

• Ե) Զեռք զարկել ստեղծելու չեքիտասարդության համար և նրա կյանքից տռնված հատուկ գեղարվեստական գործեր, ինչպես մասսայական թատրոն, չեքիտասարդության համար նոր սեպերտուար թատրոնի և կինոյի համար, մի սեպերտուար, վորի մեջ պետք է մտնեն սոցիալիստական շինարարության գողափարները քարոզող, մեր թերություններն ու ցավերը հայտնաբերող գործեր, ինչպես նաև այնպիսի գործեր, վորոնց մեջ տեղ գտնի պաշքարը նոր կենցաղի, արտադրական զինսցիպլինայի, աշխատանքի արտադրողականության, գյուղի կոլեկտիվացման համար և այլն:

զ) Հատուկ ուշադրություն դարձնել չեքաժտական և գեղարվեստական տեխնիկոմները, կոնսերվատորիաները և արվեստի հետ կապ ունեցող այլ կրթական հաստատությունները կոմյերիտականներ, բանվորներ և գյուղացիներ քաշելու գործին:

է) Կոմյերիտական կոմիտեները պետք է լավացնեն իրենց ղեկավարությունը և գործնական ոգնությունը կոմյերիտական զրոզների ուսուցման գործում:

Այդ խնդիրների շարքում բացառիկ տեղ է զբաղում քաղուսուցումը միության մեջ: Քաղուսուցումը նպատակ ունի ձևավորել կոմյերիտականի կոմմունիստական աշխարհայացքը, տալ ամուր տեսակետներ նրա պրակտիկ գործունեության համար: Սակայն այս բնագավառում մեր աշխատանքը, վորը պետք է ընդհանրացնի մեր պրակտիկական, ոգնի չեքիտասարդությանը զլուխ հանելու ժամանակակից սոցիալ-դասա-

կարգային հարաբերությունների բարդ հյուսվածքից, դեռևս միության ուշադրության կենտրոնում չի գտնվում:

1. Կոմյերիտական լուսավորության ցանցում ուսուցումը տեղ-տեղ ընդունում է ցամաք գիրք սերտելու (зубрежка) ձև, վոր բնավ հարկավոր չի և խրտնեցնում է չեքիտասարդությանը: Պրոպագանդիստների պատրաստված կազբերի պակասությունն էլ ավելի յե դժվարացնում զրությունը: Կոմյերիտական լուսավորության ցանցի մեջ չեքիտասարդության ընդգրկումը պետք է համարել միանգամայն անբավարար: Այս հանգամանքը նկատի ունենալով՝ համագումարն առաջարկում է.

ա) կոմյերիտական լուսավորությունն ուղղել սոցիալիստական շինարարության և թեքումների դեմ մղվող պաշքարի գործում կուսակցության հերթական անելիքները չեքիտասարդության լայն խավերին բացատրելու, միության պրակտիկ գործունեության փորձն ընդհանրացնելու և իդեոլոգիական պայքարի գծով:

բ) լայնորեն ծավալել միության մեջ կամավոր թեմատիկ խմբակների սիստեմը.

գ) ավելի լրիվ չափով ոգտագործել կոմյերիտական սիստեմից դուրս գտնվող չեքիտասարդության քաղուսուցման մյուս հնարավորությունները, — կուս ուսուցումը, քաղուսովար, արհմիություններ, դպրոցներ և այլն.

դ) առավելագուցն չափերով թեթևացնել կոմյերիտական ուսուցման ծրագիրը, կարելույն չափ կրճատելով նրա պատմական մասը.

ե) մտցնել կոմյերիտական պրոպագանդիստներին կադրերի հաշվառման և պլանաչափ պատրաստման սխեման:

2. Միության մեջ մարքսիզմ-լենինիզմի լուրջ խորացումը՝ պրոպագանդի հարցերը, թեորիայի լուրջ յուրացումը, մանավանդ միության ակտիվի կողմից, ստանում են հսկայական նշանակություն իդեոլոգիական ձևափոխի հաջող կազմակերպման գործում: Այս ասպարիզում ԼԿՅԵՄ ամենից թույլ է: Արհամարհական վերաբերմունքը դեպի թեորիայի հարցերը, նեղ պրակտիցիզմը, վերջ բավականանում է որովա լոգունգների մակերեսային ծանոթութամբ, վերջ, դժբախտաբար, դեռևս բավական տարածված չեղելից է միության մեջ: Պետք է աշխատել խորապես գիտակցել տալ ամենից առաջ միության ակտիվին, այն անկասկածելի փաստը, վերջ այս դրությունն սպառնում է վիժեցնել կոմյերիտմիության կողմից ձեռք առնվող բազմաթիվ կարևորագույն ձեռնարկումներ:

Համագումարն առաջարկում է հենտկոմին մշակել միության ակտիվի խորացումը ուսուցման հարցը և իբրև անմիջական խնդիր առաջարկում է.

ա) բարձրագույն դպրոցների կոմյերիտականներին քաշել զիտական աշխատանքի.

բ) դեկավար ակտիվի համար կազմակերպել պարտադիր ուսուցում հատուկ սեմինարներ ստեղծելու ճանապարհով.

գ) կոմյերիտականներ ուղարկել ակտիվի վերապատրաստման դասընթացները.

դ) կազմակերպել հեռակա կրթության գործը. այս առթիվ համագումարն առաջադրում է «հեռակա

կուրսերում սովորած 500 կոմյերիտականներ ուղարկել կոմբուհերը» լոգունգը.

ե) համապատասխան որգանների առաջ հարց հարուցել հիմնիլու Յերևանում և Լենինականում կիրառնորյա կուսակցական համալսարաններ, ալդտեղներգրավելով կոմյերիտական ակտիվը.

զ) մշակել չերիտասարդության մեջ լայն լեկցիոն աշխատանք կազմակերպելու հարցը:

VIII

Կոմյերիտական պարբերական մամուլն ու գրականությունը միության առջև կանգնած այնպիսի խնդիր է, վեր ստանում է բացառիկ նշանակություն: «Ավանգարդ» լրագիրը համեմատաբար վատ չէ լուսաբանում աշխատավոր չերիտասարդության կյանքի և կենցաղի ամենորյա կոնկրետ հարցերը, սակայն նա դեռևս լիովին չէ կարողացել ալդ կոնկրետ հարցերը բարձրացնել մինչև սկզբունքային մակարդակը, ընդհանրացնել ալդ հարցերն ընդհանուր կուսակցական խնդիրների լուսի տակ:

Մեր շինարարության խոչընդոտների և հիվանդագին չերևույթների դեմ մղվող պայքարի հարցերում լրագիրը դեռևս դուրս չէ յեկել նրանց սոսկ ցուցադրման շրջանակներից: Դեռևս ստեղծված չէ լրագրի կենդանի անմիջական աշխատանք՝ վերացնելու մեր թերությունները, մեր կյանքի հիվանդագին չերևույթները:

Լրագրում թույլ է ինչպես մեր ընդհանուր, նույնպես և հատուկ կոմյերիտական նվաճումների ընդհան-

րացումը: Այս պայքարը թշնամի իդեոլոգիաների դեմ թերթում դեռևս բավականաչափ խորացրած է:

Այս բոլոր ուղղութիւններով թերթը պետք է շտկի իր աշխատանքները:

Բրոյշուրային գրականութեան ասպարիզում հիմնական թերութիւններն են՝ նրանց սակավութիւնը, նյութերի վոչ բավականաչափ լուրջ բնորոշութիւնը և, վերջապես, նրանց տարածման գործի անկանոնութիւնը:

Համագումարը հանձնարարում է կենտկոմին միջոցներ ձեռք առնել, վորպեսզի կանոնավոր կերպով հրատարակվեն հանրամատչելի բրոյշուրներ միութենական աշխատանքի բոլոր կարևորագուէն հարցերի վերաբերմամբ և փաստորեն հասցնել այդ գրականութիւնը բանվորա-գյուղացիական մասսաներին:

IX

Իդեոլոգիական պայքարի խորացումը, սրուխտարիատին խորթ իդեոլոգիաները դուրս մղելն աշխատավոր չերիտասարդութեան շարքերից, վորը պահանջում է միութիւնից ամենալայն չափերով ծավալել մասսայական աշխատանքի բոլոր ձևերը, պարտավորեցնում են կոմյերիտմիութեանը առավելագուէն ուշադրութիւն նվիրել պիոներների դասակարգային դաստիարակութեանը: Կենցաղային աշխատանքի հիմնական գծին չերեւութները, խորթ տրամադրութիւնները մանուկ-պիոներների մեջ պակաս չեն տարածված, քան կոմյերիտականների մեջ: Միութեան ղեկավարութիւնը խիստ լատ է մնում պիոներ կազմակերպութիւնների հատուկ բազմազան պահանջներից: Պիոներների քաղուսուցումը չափազանց քիչ է հարմարեցված մանուկների հասակի առանձնահատկութիւններին:

Աշխատանքի այս բնագավառը համագումարը միութեան թույլ կողմը համարելով, առաջարկում է կենտկոմին գործնականապես հետևյալ ուղղութեամբ մշակել միութեան ղեկավարութեան հարցերը, — վերակառուցել պիոներ կազմակերպութեան աշխատանքը մանուկների լայն ինքնագործունեութեան հիմունքով: ստեղծել պիոներ կազմակերպութեան մանկավարժութիւնը գրագետ ակտիվի կազմը կոմյերիտականներից, բանվորներից ու գյուղացիներից, լավացնել մանուկների դասակարգային դաստիարակութիւնը, ինչպես նաև անհարազատ իդեոլոգիաների արտահայտութիւնների դեմ մղվող պայքարի մեթոդներն ու ձևերը:

X

Այն չափազանց պատասխանատու պարտականութիւնները, վոր զրկած են ԼԿՅԵՄ վրա իդեոլոգիական ճակատում մղվող պայքարի գործում, այդ պայքարի պայմանների բարդութիւնը և սրութիւնը, վորոնք պահանջում են լարել միութեան բոլոր ուժերը, հրամայաբար առաջադրում են միութեան կուսդեկավարութեան վորակի բարձրացման խնդիրը:

Համագումարը վորոշակի արձանագրում է, վոր առանց կուսդեկավարութեան վորակի լավացման կոմյերիտմիութեանը չի կարող իրագործել իր խնդիրը:

Համագումարն առաջարկում է կենտկոմին կոնկրետ կերպով մշակել այս հարցը, նկատի ունենալով միութեան պրակտիկ պահանջները, վորոնք բղխում են ԼԿՅԵՄ աշխատանքը նոր ձևով վերակառուցելու անհրաժեշտութիւնից, և ներկայացնել Հայաստանի Կ (բ) Կ կենտկոմին ի քննութիւն:

ԿՈՍՏՈՍՈՒԼԻ ԱՆՆԵԼԻՔՆԵՐԸ ԳՅՈՒՂԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱ- ԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

(ՀԼԿՅԵՄ ԿԿ ԲՅՈՒՐՈՑԻ ԹԵԶԻՍՆԵՐԸ, ԸՆԳՈՒՆՎԱԾ ՀԼԿՅԵՄ Ե-ԲԳ
ՀԱՄԱԳՈՒԾԱՐԱՐՈՒՄ)

1. Կոմյունիստիկական հիմնական անելիքները գյուղում

1. «Գյուղատնտեսությունը բարձրացումն արագացնելու և նրա զարգացման նոր ետապին համապատասխանող ձևերով սմիչկան ամրացնելու հիմնական մեթոդ հանդիսանում է ինդուստրիայի հետագա զարգացումը, վորը հիմնական պայմանն է գյուղատնտեսության բարձրացման, գյուղացիներին աղքատության ձիրաններից ազատելու և նրանց առանձնացած տնտեսությունները հանրային տնտեսության վերածելու համար»:

...«Այստեղից առաջ է գալիս հրամայական անհրաժեշտություն՝ կատարելու հաստատակամ և սխտեմատիկ աշխատանք գյուղատնտեսությունը վերակառուցելու և խոշոր հանրային հողագործություն ռտեղծելու համար, վորը կանգնած պետք է լինի այժմյան տեխնիկայի բարձրության վրա, միաժամանակ պետք է նպաստել անհատական չքավորական և միջակ գյուղացիական տնտեսությունների բարձրացմանը» (16-րդ կուս. համագումարի վորոշումներից):

Կոմյունիստիկությունն իր ամբողջ աշխատանքը պետք է կառուցի այս հիմունքներով:

Կենտրոնական խնդիր պետք է հանդիսանա հետևյալը — կոմյունիստիկության և ամբողջ բանվորագյուղացիական լերիտասարդության ստեղծագործ ուժերը լծել այս հիմնական խնդրի իրագործման աշխատանքին: Այս տեսակետով հիմնական շրուշթ պետք է լինի՝ իրագործել ՀամԼԿՅԼՄ 8-րդ համագումարի հետևյալ լողունգները՝ «կոմյունիստական պետք է լինի կոլեկտիվացման գործի առաջամարտիկը», «կոմյունիստական տնտեսը պարտավոր է լինել կոլտնտեսություն անդամ»:

2. Այդ խնդիրների գործնական իրագործումն ապահովող անհրաժեշտ պայմանները հետևյալներն են.

ա) Քաղաքի և գյուղի աշխատավոր լերիտասարդությունը պետք է շարունակի իր ստեղծարարակտիվ մասնակցությունը սոցիալիստական շինարարությունը՝ ձգտելով հետևյալին. «վճռականապես լավացնել աշխատանքի վորակը և աշխատանքային կարգապահությունը ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում: Հինգ տարվա ընթացքում իջեցնել արդյունաբերական արտադրանքի ինքնարժեքը 35 տոկոսով, իջեցնել շինարարության ինքնարժեքը 50 տոկոսով, բարձրացնել աշխատանքի արտադրականությունը 110 տոկոսով, բարձրացնել բերքատվությունը 35 տոկոսով, ընդարձակել ցանքի տարածությունը 22 տոկոսով, անպայման իրագործել կոլտնտեսական և խորհրտնտեսական շինարարություն ծրագիրը, վճռական պայքար մղել գործալքումների և թափթիվածության դեմ արտադրության ասպարիղում, ամրացնել աշխատանքային կարգապահությունը, մտցնել արտադրության սոցիալիստական ուղիղնալացում, ապահովել արդյուն-

նաբերությունն ու գլուղատնտեսութիւնը ղեկավար-
ներն անհրաժեշտ կադրերով (կազմով), ստեղծել կար-
միր մասնագետների նոր կադրեր բանվորներից և,
վերջապես, ուժեղացնել պլանային-կարգավորիչ սկզբ-
բունքը ժողովրդական տնտեսութեան սխառմում,—
ահաւասիկ ընդհանուր տնտեսական կարգի այն տար-
րական պայմանները, վորոնք անհրաժեշտ են հնգա-
մյա պլանի իրագործման ղեկավարութիւնները հաղթա-
հարելու համար» (16-րդ կուսկոնֆերենցիայի վորո-
շումներից)։ Համագումարն ընդգծում է, վոր վճռական
անհրաժեշտութիւնն է համարում միութենական աշ-
խատանքի բոլոր ողակները չենթարկել այս կոնկրետ
խնդիրների իրագործման նպատակներին, ծավալելով
գործարար ինքնաքննադատութիւն և վճռական ու
համարձակ կերպով վերակառուցելով միութենական
աշխատանքը նոր հիմունքներով։

բ) Կոմյերիտմիութեան մասսաներն էլ ավելի
համախմբել կուսակցութեան գլուղական քաղաքակա-
նութեան շուրջը, ապահովել դասակարգային լենի-
նյան մոտեցումը ԼԿՅԵՄ բոլոր կազմակերպութիւննե-
րի աշխատանքներում, ամեն կերպ ամրապնդել բան-
վորա-գլուղացիական դաշինքը։

Համագումարը վճռականապես դատապարտում է
ԼԿՅԵՄ շարքերում գոյութիւն ունեցող թերագնահատ-
ման վերաբերմունքը դեպի միջակի դերը, քանի վոր
այդ վերաբերմունքն որքեկտիվորեն ձեռնտու չէ մեր
դասակարգային թշնամիներին, ջուր է լցնում հակա-
կոմմունիստական իդեոլոգիաների ջրաղացին, տանում
է դեպի թուլացում և ճեղքվածք առաջացնելը բան-
վորա-գլուղացիական դաշինքում, իսկ դրանով նաեւ

դեպի խախտումը պրոլետարիատի դիկտատուրայի
հիմքերի։ Համագումարն ամենայն կտրականութեամբ
առաջարկում է ԼԿՅԵՄ բոլոր կազմակերպութիւննե-
րին ավելի վճռական պայքար մղել հակամիջակային
տրամադրութիւնների դեմ, լիովին բացատրելով կազ-
մակերպութեանը Լենինի հետեւյալ ֆորմուլայի իմաստն
ու նշանակութիւնը և ապահովելով նրա լիակատար
կիրառումը գործնականում. «Պետք է կարողանալ հա-
մաձայնութեան գալ միջակ գլուղացիութեան հետ,
վոչ մի բոլոր չհրաժարվելով կուլակի դեմ պայքարե-
լուց յեւ ամրապես հենվելով միայն չքավորի վրա,
իր առջեւ դնելով պրոլետարիատի դիկտատուրան
ամեն կերպ ամրացնելու հիմնական խնդիրը։

3) Սոցիալիստական վերելքի ղեկավարութիւնները,
մանր բուրժուական և բուրժուական իդեոլոգիաների
կողմից պրոլետարիատի վրա ճնշում գործ դնելն ա-
ռաջ են բերում կուսակցութեան և ԼԿՅԵՄ առանձին
անկաշուն խավերում չերբրումներ, տատանումներ և
շեղումներ կուսակցութեան լենինյան գծից։ Կուսակ-
ցութեան և Կոմյերիտմիութեան մեջ ներկայումս ա-
ռանձնապես վտանգավոր են դառնում այդ ուղղութիւն-
նիստական ճնշումը և հաշտվողական վերաբերմունքը
դեպի այդ թեքումը։

Այդ վտանգն ավելի չէ մեծանում նրանով, վոր
մեր մանր-բուրժուական գլուղացիական չերկրում այլ
վտանգը տարածվելու պարարտ հող է գտնում։ Այս
պատճառով հարձակողական խորացրած պայքարն
իդեոլոգիական ճակատում առաջվան պես կենտրոնա-
կան խնդիր է մնում ԼԿՅԵՄ համար նրա գլուղաշխա-
տանքի ասպարիզում։ Այստեղ կրակը պետք է կենտ-

րոնացնել աջ ուղղորտյունիստական թեքման և հաշտ-
վողականության վրա, ինչպես նաև ուժեղացնել պաշ-
քարը հացիոնալիզմի (ազգայնականության) դեմ, վոչ
մի ժամանակ չմոռանալով հակահեղափոխական տրոց-
կիզմի մնացորդները վերջնականապես ջախջախելու
անհրաժեշտությունը:

Այս պաշքարի որենքներով պետք է դաստիա-
րակել և գաղափարապես զինել կոմյերիտմիությունը,
ապահովել նրա մեջ լենինյան իդեոլոգիայի մաքրու-
թյունը և նոր խորհրդային գյուղի կուլտուրական շի-
նարարների նույն կազրերի դասակարգային, կոմմու-
նիստական դաստիարակությունը: Պետք է ամրացնել
ԼԿՅԵՄ քաղաքական ազդեցությունն աշխատավորա-
կան և միջակ յերիտասարդության շարքերում, ուժե-
ղացնել ԼԿՅԵՄ-ում պրոլետարական կորիզը, ուժեղաց-
նել ԼԿՅԵՄ ղեկավարությունը, համախմբել կոմ-
շերիտմիության բովանդակ ուժերը — կարելու է չափ
ուտ կենսագործելու կուսակցության 15-րդ համագու-
մարի և 16-րդ կոնֆերենցիայի վորոշումները գյուղի
հարցերի վերաբերմամբ:

2. Խճճ ԵՎԱՏՈՒՄՆԵՐ ՈՒ ՔԵՐՈՒՅՈՒՄՆԵՐ ՈՒՄԻ ԿՈՄ- ԵՐԻՏԻՄԻՈՒՅԱՆ ԱՇԽԱՏԱՆԳԸ ԳՅՈՒՂՈՒՄ

1. Համագումարը գոհունակությամբ արձանա-
գրում է, վոր վերջին ժամանակներս, մասնավանդ
ԼԿՅԵՄ շարքերի զուգամից հետո, հսկայական առաջըն-
թացություն է նկատվում կոմյերիտմիության գյուղա-
ան աշխատանքի մեջ: Միությունը դադարաբաշտ-
և կազմակերպչորեն ամրացրել է իր շարքերը, վոտք
և զրել իր զարգացման ճիշտ ճանապարհի վրա, բարձ-

րացրել է կոմյերիտմիության հեղինակությունն ան-
կուսակցական յերիտասարդության աչքում՝ նրա
լավագույն և հարագատ տարրերին իր շարքերը ներ-
գրավելով: Կազմակերպությունը նշանակալի նվաճում-
ներ է ունեցել նաև գյուղի կուլտուր-տնտեսական
կյանքի մակարդակը բարձացնելու առաքարիզում:

2. Կոմյերիտմիության հիմնական նվաճումները
հետևյալներն են.

ա) Ուժեղացել է գյուղական կազմակերպություն-
ների մասնակցությունը բերքատվության բարձրաց-
ման և ցանքի տարածության ընդարձակման գործում,
մասնավանդ բերքարշավ կազմակերպելու գործում:

բ) Առանձին կազմակերպություններում ծայր է
առել շարժում դեպի հողի կոլլեկտիվ մշակումը, մե-
քենագատագործական ընկերություններ կազմակեր-
պելը, գյուղատնտեսական կոոպերացիային անդամա-
գրվելը, չքավորներին ոգնություն գույց տալը, սեր-
մացուն դռելը և այլն:

գ) ԼԿՅԵՄ նախաձեռնությամբ կազմակերպվում
են կոլտնտեսություններ, նրանց մեջ ավելանում է
կոմյերիտականների թիվը, հրավիրվում են կոլտնե-
սային յերիտասարդության խորհրդակցություններ,
կոմյերիտականները կոլլեկտիվ կերպով մտնում են
կոլտնտեսությունների մեջ, կիրառվում են գյուղա-
տնտեսության քիմիացման հասարակ միջոցներ:

դ) Կոմյերիտականներն ակտիվ մասնակցում են
կուսակցության մղած պաշքարներին, վորպիսիք են՝
խորհուրդների, կոոպերատիվ կազմակերպությունների
ընտրությունները, կոնարակտացիան, գյուղատնտե-
սական մթերքների մթերումը, հարկումը, հողաշինա-
րարությունը և այլն:

Այդ կամպանիաներում կոմյերիտական կազմակերպություններն ունեցան ելակախ նվաճումներ, ահա տիվ կերպով հրապարակ գալով կուսակցության հետ և նրա անմիջական ղեկավարությամբ՝ պաշտարելու կուսակցության դեմ, վորը փորձեր եր անում հարվածելու կուսակցությանը և խորհրդային իշխանությանը:

Ե) Կոմյերիտական կազմակերպությունները նպաստում են անհատական չքավորական և միջակ տնտեսությունների վերելքին, ներգրավում են դրանց կոոպերացիայի մեջ, ուժեղացել է կոմյերիտական բջիջների մասնակցութիւնը գյուղատնտեսական կոոպերացիայի, վարկային ընկերությունների աշխատանքներում, լավացել է բաւորակ չերիտասարդության շրջանում կատարվող տնտեսական աշխատանքը և կուլտարաշարի կազմակերպութիւնը:

զ) Կոմյերիտմիութիւնը կազմակերպում է բանվորական բրիգադներ՝ նորոգելու գյուղացիության չերկրագործական գործիքները, կազմում է ֆոնդեր՝ ոգնելու չքավորներին ինվենտարով, ԼԿՅԵՄ լավացրել է շեֆական աշխատանքը, կազմակերպում է շարաթորյակներ՝ առուները հանելու և հեղեղումների դեմ պայքարելու համար:

3. Հավաստելով, վոր վերոհիշյալ նվաճումները ԼԿՅԵՄ ձեռք է բերել վոչ ամենուրեք, Հայաստանի ԼԿՅԵՄ 6-րդ համագումարը կազմակերպության առջև խնդիր է դնում առանձին նվաճումներից անցնելու նրանց սիստեմատիկ դարձնելուն, մանավանդ լեռնային շրջաններում: Համագումարը միաժամանակ նշում է, վոր գյուղական բջիջների նշանակալի մասի աշ-

խատանքն ամբողջությամբ առած՝ դեռևս չի յենթարկված տնտեսական աշխատանքի խնդիրներին: Դեռևս թույլ են մասսայականացված ԼԿՅԵՄ աղբիւրաւոր ձեռնարկումները, մասսաները բավարար չափով չեն ներգրավված գյուղկոոպերացիայի մեջ, կոմյերիտմիութիւնը պատիւ մասնակցութիւն է ցույց տալիս, իսկ վորոշ տեղերում էլ բնավ չի մասնակցում կոնտրակտացիայի աշխատանքներին, իսկ «վոչ մի կիլո մասնավորին» լողունգը դեռևս չի կիրաւորում:

4. Այս բոլորից չենելով, համագումարն առաջարկում է ԼԿՅԵՄ բոլոր գյուղական կազմակերպութիւններին իրենց աշխատանքի անկունաքար դարձնել տնտեսական աշխատանքը և այն ամեն կերպ ուժեղացնելը: Այստեղ անհրաժեշտ է հատուկ ուշադրութիւն դարձնել ծավալելու կոմյերիտական մասսաների ամենալայն ինքնագործունեութիւնը կուսակցության տնտեսական ձեռնարկումների շտրքը, կենտրոնական խնդիր դարձնելով միութնական աշխատանքի ամբողջ սիստեմը նոր հիմունքներով վերակառուցելը: Մեր ամբողջ գործնական աշխատանքն այնպես պետք է կառուցել, վորպեսզի չուրաքանչյուր կոմյերիտական ստեղծարար աշխատանք կատարելով սոցիալիզմի կառուցման ասպարիզում, միաժամանակ աչք աշխատանքի պրոցեսում կոփվի և դաստիարակվի լենինիզմի վոգոյ, դառնա նոր, խորհրդային գյուղի կուլտուրական կառուցող:

3. ԼԿՅԵՄ անելիքները գյուղատնտեսութեան բարձրացման գործում

1 «Կոմյերիտական կազմակերպութիւնը գյուղում պետք է լինի կուսակցութիւն համար մի խոշոր ՀայԼԿՅԵՄ VI համագումար—3

րագույն լծակ՝ գյուղատնտեսության բարձրացման յեվ կոլլեկտիվացման, կուլտուրական լայն նախածեռնության զարգացման յեվ սոցիալիստական աշխատավորների նոր կադրեր պատրաստելու գործում»։ Այսպես է բնորոշել կոմյերիտական կազմակերպությունների զերը մեր կուսակցության 15-րդ համագումարը։ Այս գերեկտիվի կատարումը գործնական հողի վրա դնելը, պրոպագանդի լեզվի վերածելը պետք է դառնա միության բջիջների գյուղական աշխատանքների առանցքը։ Նրանք պետք է ձեռք առնեն ահեհհասարակ միջոցներ, վորոնք գան նպաստելու գյուղատնտեսության կոլլեկտիվացմանը. գյուղբջիջները պետք է կիրառեն հողի միասնական մշակում, միասնարար գնեն գյուղատնտեսական ինսկենտար, միասնարար ստանան վարկեր, կազմակերպեն մեքենատգտագործական ընկերություններ, արտեհներ։ Այսպիսով առաջ գնալով՝ նրանք ահեհհտե պիտի աեցեն կոլտնտեսությունների կազմակերպման, պետք է ծավալեն մասսայական կուլտուր-դաստիարակչական աշխատանք, հիմնելով և աշխուժացնելով խրճիթ-ընթերցարաններ, ահուամերներ, աեդրագիտության վերացման կայաններ, քաղզրագիտության դասընթացներ ու դպրոցներ, կազմակերպելով կուլտարչափներ, գյուղատնտեսական խմբակներ և ալլն։

Այս նպատակով համագումարն առաջարկում և լկՅԵՄ բոլոր կազմակերպություններին՝

ա) Ռեքեդացնել իրենց մասնակցությունը կոոպերացիայի բոլոր տեսակների և առաջին հերթին գյուղկոոպերացիայի աշխատանքներին, աշխատելով ալլ կազմակերպությունների մեջ. ամենալայն չափե-

րով ընդգրկել գյուղացիությունը։ Այստեղ ահհատ կոմերիտականները, մասնավաե տնատեր-կոմերիտականները պետք է նախածեռնություն հաեդես բերեն՝ ստեղծելու դաեագաե տեսակի կոոպերատիվ միավորումներ, նպատակ ունենալով առավելագույն չափերով նրանց մեջ առնել կոմերիտականներին ու աեկուսակցական յերիտասարգությանը, առաջին հերթին տնատեր կոմերիտականներին։

բ) Հատուկ ուշադրություն պիտի դարձնել մասսայականացնելու ազրոկուլտուր և տեխնիկական գրագիտությունը գյուղացիության մեջ և վերացնելու ազրիկուլտուր և տեխնիկական աեդրագիտությունը լկՅԵՄ ահտիվի շարքերում։ Այս նպատակով պետք է կատարել հետեյալ գործնական աշխատանքները. յուլաշաեչուր խրճիթ-ընթերցարանին կից կազմակերպել գյուղատնտեսական գրագարան, պարբերաար կազմակերպել դասախոսություններ, գրույցներ՝ նըվիրված հետեյալ նյութերին. «Ինչպես բարձրացնել գյուղատնտեսությունը», «աեհատական տնտեսության հեա համեմատած ինչ առավելություններ ունի կուտնտեսությունը» և ալլն։ Պետք է վորակապես լավացնել գյուղատնտեսական խմբակների, գյուղատնտեսական դպրոցների աշխատանքները, ավելացնելով նրանց թիվը, նրանց ղեկավարության համար գործի կանչելով խորհրդային կուլտուրական ուժերը. պետք է վճռականորեն ծավալել գուղացիական յերիտասարգության հատուկ յերեկոյան դպրոցների, կարճատե դասընթացների ցանցը և կազմակերպել ցուցագրական դաշտեր գյուղյերիտգրոցներին կից։

գ) Պարտավորեցնել կոմերիտականներին, առա-

ջին հերթին տնատեր կոմյերիտականներին՝ կիրառելու իրենց տնտեսություններում ագրիկուլտուր ձեռնարկումներ և նորամուծություններ:

դ) Կոմյերիտականները պետք է որինակ տան մյուսներին գյուղատնտեսության կուլտուրականացման, բերքատվության բարձրացման և ցանքերի ստրածության ընդարձակման գործում: Այստեղ պետք է կիրառել ամեն միջոց, վոր չի պահանջի հատուկ ծախսեր, այն և՛ սերմացվի դուռն և ախտահանում, գութանի, տրակտորի գործածություն, շարքացանություն, պարարտացում, պայքար ֆեոսատուների և մոլախոտի դեմ, վոռոգում և այլն: Պետք է կազմակերպել հողի միասնական մշակության ընկերություններ, երակուրսիաներ դեպի կոլտնտեսությունները և խորհրդատեսությունները, ինչպես նաև որինակելի տնտեսությունները, կազմակերպել գյուղատնտեսական վարկելի ստացում և գործադրում իրենց բուն նպատակին: Պետք է կազմակերպել հարց ու պատասխանի յերեկո: Ներհայտ նյութերի շուրջը՝ «Բնչպես պարարտացնել հողը», «Բնչպես բարձրացնել բերքատվությունը», «Վո՞րն է գյուղատնտեսական ինվենտարի նպատակահարմար և ռացիոնալ ոգտագործումը», «Բնչպես կազմակերպել սերմանման գործը» և այլն:

ե) Կոմյերիտականները պետք է լինեն հախտձեռնողներ, սկսողներ, կազմակերպիչներ կոլտնտեսություններ ստեղծելու գործում, պետք է մասնակցեն կոլլեկտիվացման աշխատանքներին, լինեն կոլլեկտիվացման գաղափարի տարածողներ և չքավորական ու միջակ տնտեսական տնտեսություններին կոոպերացման ու կոլլեկտիվացման դրողներ. նրանք

պետք է լինեն կոլտնտեսներին ախտիվ և գործարար ոգնականները կոլտնտեսությունների խոշորացման համար ձեռք առնվող միջոցների կիրառման գործում. նրանք պետք է մարտնչեն հակամիջակաչին տրամադրությունների դեմ՝ միջակ տնտեսությունները կոլտնտեսությունների մեջ ներգրավելու ասպարիզում:

զ) Պետք է կազմակերպել կոնտրակտացիայի գաղափարը գյուղացիության մեջ տարածելու գործը, նպատակ ունենալով կոնտրակտացիայի յենթարկել բոլոր տնտեսական չքավոր և միջակ տնտեսությունների արտադրանքը, իսկ տնատեր կոմյերիտականների համար պետք է պարտադիր դարձնել իրենց տնտեսությունների արտադրանքը կոնտրակտացիայի յենթարկելը:

է) Գյուղական բջիջները պետք է կազմակերպեն հասարակական լաչն ոգնություն չքավորներին և կարմիր-բանակայինների ընտանիքներին հող մշակելու, վարկեր ստանալու, բերքը հավաքելու և այլ գործերում: Միաժամանակ նրանք պետք է պայքարեն կուլակության դեմ, յերբ սրանք չքավորների հողը վարձակալելու, նրանց գյուղատնտեսական ինվենտար, լծկան և այլն տրամադրելու ձանապարհով փորձեր կանեն իրենց հետ կապելու, իրենց ստրուկը դարձնելու չքավորներին:

2. Համագումարն արձանագրում է, վոր կուլտուրական հողագործների կադրեր ուստրաստելու խնդիրը ՀԿՅԵՄիության կազմակերպությունների ուշադրության կենտրոնը չի կազմել: Գյուղայերադարձրոցները, վորոնք կոչված են այդ բանին, դեռևս ամբողջությամբ չեն ոգտագործել իրենց առջև դրված

խնդիրը: Այս պատճառով համագումարն առաջարկում է ԼԿՅԵՄ Կենտկոմին ամենակարճ ժամանակամիջոցում (վոչ ուշ, քան մինչև նոր ուսումնական տարին) Լուսժողովմատի հետ միասին ձեռք առնել մի շարք միջոցներ ինչպես դպրոցները նյութապես ապահովելու, նույնպես և նրանք վորակապես բարձրացնելու և ավելի եֆֆեկտիվ դարձնելու ուղղությամբ: Միաժամանակ համագումարը կողմնակից է, վոր կազմակերպվի գյուղերի տղաքոցների ոգնություն ամիս:

3. Արձանագրելով, վոր բերքարշավը և գյուղի սոցիալիստական վերակառուցման աշխատանքները ավել են հսկայական դրական արդյունքներ, համագումարը գտնում է, վոր այդ նվաճումները վոչ մի դեպքում չպետք է իջեցնեն արշավի տեմպը, այլ ընդհակառակը, պետք է դրդեն ավելի ուժեղացնելու այդ աշխատանքը, ամրացնելու ձեռք բերված նվաճումները, լավացնելու աշխատանքի վորակը: Միաժամանակ համագումարն առաջարկում է ԼԿՅԵՄ բոլոր կազմակերպություններին նախկին չեռանդով ու տեմպով շարունակել արշավը մինչև աշնան «Բերքի որը», չերբ պետք է ամփոփվեն և ցուցադրվեն գարնան սերմանման կամօրանիայի արդյունքները ցուցահանդեսներում և պիտի կազմակերպվի հանրապետական կոնկուրս:

4. Հասարակական, բաղաժանյան լեվ կուլտուր-լուսավորական աշխատանք

1. Գյուղի սոցիալիստական վերակառուցման հաջողությունը հսկայական չափով կախված է մասնակցների հասարակական, քաղաքական և կուլտուրական մակարդակը բարձրացնելուց:

Կուսակցությունը, յուրացնելով անհատական չքավոր և միջակ տնտեսությունները հանրայնացնելու և խոշոր կ'լստեսությունները վերածելու, խոշոր խորհրտեսություններ կազմակերպելու ընթացք (կուրս), միաժամանակ նպատակ է դրել կենսագործել կուլտուրական կենցաղային հեղափոխությունը: Ահավասիկ այս խնդիրների լուսի տակ պետք է ծավալեն Կոմլերիտմիության գյուղական բջիջներն իրենց հասարակական-քաղաքական և կուլտուր-լուսավորական աշխատանքը:

Այդ նպատակով պետք է կատարել հետևյալը:

ա) Միություն մասսան և անկուսակցական չերիտասարդություններ իրազեկ պահել ընթացիկ անցքերին, լայնորեն բացատրելով նրանց կուսակցության, խորհրդային իշխանության և կոմլերիտմիության հերթական անելիքներն ու ձեռնարկումները, կազմակերպելով այդ անցքերի, անելիքների և ձեռնարկումների շուրջը յերիտասարդության հասարակական կարծիքը՝ ճիշտ, ժամանակին և սխտեմատիկ քաղաքական արդիտացիայի ու պրոպագանդի միջոցով:

բ) Ուժեղացնել կոմլերիտականների և անկուսակցական չերիտասարդության գործարար մասնակցությունը գյուղխորհուրդների և նրանց սեկցիաների, կոոպերացիայի, գյուղփոխօգկոմիների, չքավորական իմրականների և այլ հասարակական կազմակերպությունների աշխատանքներին, ամեն կերպ ուժեղացնելով իր մասնակցությունը քանակապես և բարձրացնելով նրա վորակը:

գ) Պետք է ամեն կերպ լավացնել և ուժեղացնել բջիջների տնտեսական աշխատանքը, առաջին հերթին

բառարկութեան և տնայնագործական ձեռնարկութուններում աշխատող յերիտասարդների շրջանում, աշխատելով բարեկամել նրանց նյութական և կուլտուրական պայմանները, պաշտպանել նրանց իրավունքները, հսկելով նրանց աշխատանքին վերաբերող որոշումները և հավաքական պայմանագրի ճիշտ կիրառմանը:

Միաժամանակ անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել գործադուրկ յերիտասարդութեան նյութական վիճակը բարելավելու վրա, հողանտառ միութեանը և գյուղփոխոգկոմիներին առաջարկելով կադմակերպել գործադուրկ գյուղական յերիտասարդութեան ոգնութեան ֆոնդ և փոխողնութեան դրամարկըղներ:

դ) Հաշվի առնելով այն հանգամանքը, վոր խորհանտեսութուններում և կոլտնտեսութուններում աշխատող յերիտասարդութեան աշխատանքի հարցերը չեն գտնուել ԼԿՅԵՄ ուշադրութեան կենտրոնում, համագումարն առաջարկում է կենտրոնական կոմիտեին ամենակարճ ժամանակամիջոցում ուսումնասիրել այդ յերիտասարդութեան աշխատանքի հարցերը և մշակել բջիջների անտեսական աշխատանքին վերաբերող ձեռնարկումները, այդ գործին մասնակից անելով շահագրգռված կադմակերպութունները:

Համագումարը միևնույն ժամանակ առաջարկում և մոտալուտ ժամանակներս հրավիրել կոլտնտեսային յերիտասարդութեան խորհրդակցութիւն:

և) Համագումարն առաջարկում է կենտկոմին պատրաստել բանվորների կադր և ուղարկել գյուղերը հասարակական աշխատանք կատարելու: Միաժամա-

նակ համագումարն առաջարկում է կադմակերպել մի շարք բանվորական բրիգադներ և ուղարկել գյուղերը, վորպեսզի նրանք ոգնեն գյուղբջիջներին՝ բարձրացնելու ԼԿՅԵՄ գյուղակտիվի գործնական աշխատանքի գաղափարական-քաղաքական մակարդակն ու վորակը:

զ) Շահագրգռված կադմակերպութունների հետ միասին պետք է ձեռք առնել մի շարք միջոցներ՝ լավացնելու խրճիթ-ընթերցարանների աշխատանքի վորակը: Պայքարն անգրագիտութեան դեմ, վորի նպատակը պիտի լինի ձգտել բոլորի անգրագիտութեան վերացմանը և իրագործել հայտնի լուղուղը՝ «յուրաքանչյուր՝ զրազեա կոմյերիտական պարտավոր է վերացնել մի անգրագետի անգրագիտութիւն», պետք է դառնա ինչպիս խրճիթ-ընթերցարանի, նույնպես և բջիջի աշխատանքի առանցքը կուլտուրական ֆրոնտում:

ե) Անհրաժեշտ է իմի գումարել միութեան յենառնդն ու ուժը՝ վճռական պայքար մղելու հին կենցաղի մնացորդների դեմ, վորպիսիք են՝ չաղբան, կանանց «պոլը» (գլխի շոր և դարդ), բերան կապելը, հարսների չխոսկանութիւնը մեծերի հետ, աղջիկ փախցնելն ու «դալինով» մարդու տալը, կրոնական ծեսերը, բամբասանքը, քաղքենիութիւնը, խուլիգանութիւնը, հարբեցողութիւնը, հայհոյաբանութիւնը և այլն, այդ նպատակով ծավալելով մասսայական կուլտուր-լուսավորական աշխատանք, կադմակերպելով խելացի և կուլտուրական հանգիստ ու ժամանց բանվոր-գյուղացիական յերիտասարդութեան համար, մոտեցնելով նրան դիտութեանը, դպրոցին, արվեստին,

զրահանութեանը, կազմակերպելով արշաֆներ՝ նվեր-ված այս կամ այն կուլտուրական խնդրին, կազմակերպել ագիտ-դատեր, դիսպուտներ, կամավոր խմբեր ու միավորումներ, զարկ տալով տուրիզմին, հակակրոնական պրոպագանդին և այլն և այլն, այնպիսի հաշվով, վոր յերիտասարդութեան չեղանդի և ուժի ոգտագործումը զրվի ոգտակար և միակ ճիշտ կոմմունիստական հունի մեջ:

ը) Անհրաժեշտ է սիստեմի վերածել և խորացնել հարձակողական պայքարը նացիոնալիզմի, բոլոր գույների ու յերանգների հակալենինյան իդեոլոգիաների ու տրամադրութեանների դեմ, մասնավորապես և «ձախ» թեքումների, դեպի այդ թեքումները ցուց տրվող հաշվողական վերաբերմունքի, հակակոմիւնիստական յերիտասարդական կազմակերպութեանների խմբավորումների (դաշտում, յերիտասարդ մարքսիստներ, ֆաշիստական խմբակներ, վորպիսիք են, որինակ, «լանկթիմուրականները» Դիլիջանում և այլն) դեմ, լենինյան իդեոլոգիայի մաքրութեան համար, յերիտասարդութեան իսկական դասակարգային լնտերնացիոնալ, կոմմունիստական դաստիարակութեան համար, այդ նպատակով անհրաժեշտ է մեկ կողմից կոնկրետ փաստերով և որինականերով մերկացնել հիշալ թեքումների, տրամադրութեանների, կազմակերպութեանների, նացիոնալիզմի կոնկրետ կրողների ելութեանը մամուլի, զեկուցումների, դասախոսութեանների միջոցով և բջիջային ժողովներում, մյուս կողմից՝ կազմակերպել ինտերնացիոնալ դաստիարակութեան, ինչպես նաև խմբակներ, վորոնք սիստեմատիկաբար ուսումնասիրեն հեղափոխական բանվորական շարժման

և կոմմունիստական կուսակցութեան պատմութեանը, մանավանդ կոմմունիստական կուսակցութեան պայքարը բուրժուա-նացիոնալիստական և սոցիալ-դեմոկրատական կազմակերպութեանների ու խմբավորումների դեմ (մենշեիկներ, դաշնակներ, մուսավաթականներ, եսերներ, «թունդ» տրոցկիստներ և այլն), ուսաց լեզու սովորողների խմբակներ և այլն:

թ) Անհրաժեշտ է կազմակերպել կոմյուրիստիկութեան ակտիվի սիստեմատիկ ուսուցում, նպատակ ունենալով բարձրացնել նրա թերեւորեկական մակարդակը և հասցնել նրան հեղափոխական թերիալի ըմբռնման, մարքսիզմ-լենինիզմին: Միաժամանակ անհրաժեշտ է կազմակերպել գործնական ուսուցում, ակտիվի պատրաստումը, տալով նրանց մաքսիստ փորձառութեան և գիտելիքներ այն մասին, թե միութեանական աշխատանքի ծավալման ներկա շրջանում ինչպես պետք է ռացիոնալ կերպով կազմակերպել աշխատանքը, ղեկավարել միութեանական աշխատանքի ստորին ողակները, կազմակերպել և իր յետեից տանել մասսան: Դրա հետ միասին անհրաժեշտ է բարձրացնել դուզական քաղուսուցման իդեոլոգիական վորակը՝ այդ գործի համար մորիլիզացիայի յնթարկելով ակտիվի և սմբողջ ԼԿՅԵՄ ուշադրութեանը: Այդ նպատակով անհրաժեշտ է կրթական միավորումների զբաղմունքների մեջ մտցնել աշխուժացման տարրեր, կիրառել աշխատանքի բազմազան նպատակահարմար ձևեր (քողմարտ, զեղարվիստական զրահանութեան ընթերցում, կիւնոյի, թատրոնների հաձախում և տեսածի քննարկում, պատի լրագրերի, ժուրնալների լուս ընծայում, դիագրամներ, կրթական

միավորների աշխատանքների ցուցահանդեսների կազմակերպում, այդ վերջինների ունկնդիրների ոգտագործում բարձրաձայն ընթերցանության, ղեկուցումներ կազմակերպելու, օռնաշարժանքներ կազմելու համար և այլն), պատրաստել ղեկավարներ և կազմակերպել դրանց հրահանգավորումը (սեմինարներ, պրոպագանդիստական խմբակներ, կոնսուլտացիա, խորհրդակցություններ և այլն), ձրի հրահանգչության միջոցով կազմակերպել քաղաքացիների և խմբակների աշխատանքների վերահսկողություն և հետազոտում, կազմակերպել տեղական կազմակերպությունների մրցություն, պրեմիաներով:

Այս բոլոր հարցերը պետք է զավկումների և շրջակումների հատուկ քննություն նյութ ծառայեն:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՄԼԿՅԵՄ ԱՆԴՐՅԵՐԿՐԿՈՄԻ ԲԱՆԱԶԵՎԸ ՇԼԿՅԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ (ՀԱՄԼԿՅԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ ՅԵՎ ԱՆԴՐՅԵՐԿՐԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՄԱՍԻՆ)

Լսելով ՀԼԿՅԵՄ Կենտկոմի քարտուղար ընկ. Մեհրաբյանի ղեկուցումը և ընկ. Ֆրոլովի հարակից ղեկուցումը, ՀամԼԿՅԵՄ Անդրյերկոմը նշելով անցյալ տարվա ընթացքում ՀԼԿՅԵՄ զարգացման հատուկ զբվավարությունները, գտնում է, վոր Հայաստանի ԼԿՅԵՄ աշխատանքների դրության մասին ՀամԼԿՅԵՄ Կենտկոմի IV 28-ի վորոշումները հիմնականում կատարված են: Անդրյերկոմը գոհունակութլամը նույնպես արձանագրում է, վոր ՀամԼԿՅԵՄ Կենտկոմի և Անդրյերկոմի

վորոշումների հիման վրա, ՀԿ (բ) Կ Կենտկոմի և ՀամԼԿՅԵՄ Անդրյերկոմի ղեկավարութլան ներքո, նրա նոր ղեկավարութլան գործունեութլան ընթացքում պարզ ձևակերպված և դրված են իդեոլոգիական ֆրոնտի խնդիրները (պալքարը նացիոնալիզմի, դաշնակիզմի, աջ վտանգի, հաշտվողականութլան, արոցկիստական իդեոլոգիայի դեմ և այլն) և ուղղված են ՀԼԿՅԵՄ նախկին ղեկավարութլան սխալները:

Վորպես ՀԼԿՅԵՄ և նրա ղեկավարութլան նրվածումներ՝ Անդրյերկոմը նշում է՝

Կազմակերպութլան իդեոլոգիական ֆրոնտի զգալի հաջողությունները, ՀՍԽՀ տնտեսական կյանքում ԿՅԵՄ դերի բարձրացումը, կազմակերպութլան ազատագրումը կոմյերիամիութլանը դասակարգայնորեն խորթ ելեմենտներից, ԼԿՅԵՄ սոցկազմի լավացումը, նոր կադրերի լրացման և անպետքներից ազատվելու հաշվին նրա ակտիվի սոցկազմի լավացումը, միութենական աշխատանքների և ղեկավարութլան փոփոխման գծով զգալի հաջողությունները, նույնպես և կազմակերպութլան դասակարգային զգոնութլան և աչալրջութլան բարձրացումը:

Սրա հետ միասին Անդրյերկոմը նշում է կազմակերպութլան աշխատանքների մեջ եյական թերությունների ու պակասությունների առկայությունը, ինչպիսիք են՝ բանվոր մասնավորապես ախալխիների, ինչպիսիք են՝ բանվոր չերիտասարդութլան արտադրական դաստիարակման և նրա տնտեսական ու կուլտ-կենցաղային կարիքների սպասարկման աշխատանքների դրման թուլությունը, բաւորակութլան տնտեսական և քաղաքական շահերի պաշտպանութլան և նրանց մեջ կուլտ-կրթական

համապատասխան չափով աշխատանքների բացակայութունը, կազմակերպության քաղաքական գործի ծալք անտիճան թույլ դրումը, ակտիվի ղործնական և քաղաքական վորակի բարձրացման գործում մոչ լրիվ կազմակերպված աշխատանքը և, վերջապես, աշխատանքի և ղեկավարության նոր սիստեմին անցնելու դանդաղ թափը, մանավանդ գլուղում:

Այս բոլորից յեկնելով՝ Անդրյերկումը համարում է, վոր ՀԼԿՅՄ Կենտկոմի աշխատանքը հետագայում ևս պետք է ընթանա ՀամԼԿՅՄ Կենտկոմի բանաձևի լրիվ կիրառմամբ և ՀամԼԿՅՄ Անդրյերկոմի Յ-րդ պլենումի վորոշումների հիման վրա, վորի համար առաջարկվում է հետևյալը՝

1. Կազմակերպության և նրա ղեկավարության աշխատանքում առաջին և գլխավոր տեղը, ինչպես անցյալում, պիտի գրավեն իդեոլոգիական աշխատանքների խնդիրները ՀամԼԿՅՄ Անդրյերկոմի Յ-րդ պլենումի վորոշումների հիման վրա: Այս աշխատանքում անհրաժեշտ է ուշադրության կենտրոնն ապահովել նացիոնալիզմի և նրա ներկայացուցիչների՝ դաշնակների, սպեցիֆիկների, կուլակության, հոգևորականության, արոցկիստների և բոլոր հակակոմունիստական չերիտասարդական խմբակների (դաշնի-րիտմիության, արոցկիստական չերիտմիության և այլնի) դեմ պայքարելու խնդիրներին, մարդկանց և կոնկրետ որինակների վրա ղիմակաղերծ անելով նը-րանց և նացիոնալիզմի հակապրոլետարական, հակահեղափոխական ելությունը:

Անդրյերկումը հանձնարարում է ՀԼԿՅՄ Կենտկոմին Հայաստանի կոմյերիտմիության և առաջին

հերթին նրա ակտիվի շրջանում ծավալել դաշնակիզմի, սպեցիֆիզմի և արոցկիզմի իդեոլոգիայի դեմ մղած մեր կուսակցության պայքարի պատմության ուսումնասիրությունը և ՀԿ (Բ.) Կենտկոմի միջոցով ապահովել բարձրագույն և միջնակարգ դպրոցների ծրագրերում վորպես առարկա մտցնելու կոմկուսի աղագլին քաղաքականությունը:

2. Նշելով ԼԿՅՄ մեջ չերեացող աջ տրամադրությունների առկայությունը, Անդրյերկումը համարում է, վոր կազմակերպության խնդիրը պիտի լինի հետագա անհաշտ, կատաղի պայքարն ընդդեմ կուսակցության դասակարգային գծի խեղաթյուրման, համանավանդ աջ վտանգի և հաշտվողականության դեմ, միևնույն ժամանակ չթուլացնելով պայքարը հակահեղափոխական արոցկիզմի իդեոլոգիայի և նրա միացորդների դեմ: Դրա համար անհրաժեշտ է կազմակերպության մեջ խորացնել աջ վտանգի արմատները, պատճառների և կոնկրետ փաստերով դրա դեմ պայքարելու խնդիրների խորը լուսաբանությունն ու պարզաբանումը, մամուլում լուսաբանելով այդ փաստերն ու բջիջների պայքարը:

Ակտիվի և միության մասսաների մեջ անցկացնել XVI կուսկոնֆերենցիայի վորոշումների հիմնական և լայն ուսումնասիրությունը, կազմակերպելով XVI կոնֆերենցիայի վորոշումներն ուսումնասիրող խմբակներ:

Սրա հետ միասին Անդրյերկումը պարտավորեցնում է ՀԼԿՅՄ Կենտկոմին ժամանակին ձեռք առնել բոլոր անհրաժեշտ միջոցները (գասազրքերի, ծրագրերի, ձեռնարկների պատրաստում) ՀԼԿՅՄ քաղլուսա-

վորութեան ցանցի լայնացման և արժանի բարձրութեան վրա դնելու համար:

3. Կազմակերպութեան մեջ անշեղոյսն շարունակել պրոլետարական կորիզի և նրա մեջ արտադրական բջիջների տեսակարար կշռի դերի բարձրացման գիծը: Սրա հետ զուգընթաց անհրաժեշտ և կոմիտեների կենդանի կապի հետագա լավացումն արտադրական բջիջների հետ, նրանց աշխատանքում գործնական ոգնութեան ուժեղացումը և, բանվոր չերիտասարդութեան հատուկ խորհրդակցութեան հրավիրման միջոցով, այդ չերիտասարդութեան մեջ տեղի ունեցող տրամադրութեանների և բոլոր պրոցեսների սիստեմատիկ ուսումնասիրութեանը, իրենց ժամանակին ուշադրութեան դարձնելով նրանց վրա:

Բանվոր չերիտասարդութեան մեջ խնամքա-սոցալաչին և գյուղացիական-համքարաչին տրամադրութեանների գոյութեանը կազմակերպութեանը դնում և ճիշտ կազմակերպված և սիստեմատիկ պայքարի անհրաժեշտութեան առաջ նրանց դեմ և կուսակցութեան, պրոլետարիատի ու ամբողջ չերկրի առաջ բանվոր չերիտասարդութեան պատասխանատվութեան ռեժիմի համար:

Արտադրական բջիջների աշխատանքներում արտադրական կոնկուրսների փորձերի կիրառման, ըստ մասնագիտութեան չերիտասարդ բանվորների խորհրդակցութեան, հարվածաչին բրիգադների և նման ձեռնարկումների ղեկավարութեան պրակտիկ ոգնութեան միջոցով միջոցներ ձեռք առնել ամբողջ արտադրական կյանքում կոմյունիստականների և բանվոր չերիտասարդութեան մասսայական մասնակցութեանը ծավալելու համար:

Կազմակերպել արտադրական բջիջների և ամբողջ բանվոր չերիտասարդութեան լայն և ակտիվ մասնակցութեանը սոցիալիստական մրցման մեջ՝ բջիջային և կոմիտեային կյանքի առանցքը դարձնելով այն:

4. Բանվոր չերիտասարդութեան մեջ անհրաժեշտ և կանոնավորել արտադրական, կենցաղային և տնտեսական բոլոր խնդիրների լայն լուսաբանումը, միևնույն ժամանակ ուշք դարձնելով տնտեսական և կրթական աշխատանքներին բանվոր չերիտասարդութեան ավելի մասսայական ընդգրկման վրա, ժամանակին պլանաչափ առաջ քաշելով նրան վերակալ աշխատանքների, բարձրացնել նրա տեսական մակարդակը, բարձրագույն արհեստագիտական դպրոցների (BPLI) և զանազան տեխնիկական խմբակների և այլ միջոցով և մասնավորապես ամեն կերպ աջակցել «տեխմաս» (տեխնիկական մասսաչին) ընկերութեան զարգացմանը:

Սրա հետ զուգընթաց անհրաժեշտ և միջոցներ ձեռք առնել բանվոր չերիտասարդութեան նաև ընդհանուր-կրթական մակարդակի աշխատանքները ծավալելու վերաբերյալ, նմանապես կանոնավորելու անհատական և բրիգադային աշակերտութեան խնդիրը:

5. Դյուղական բջիջների աշխատանքների առաջին պլանում բացառիկ ուշադրութեան պիտի դրավեն գյուղացիական տնտեսութեաններին միացման և խոշոր կոլլեկտիվների վերափոխելու հարցերը: Ֆերկրագործական շրջաններում բջիջներն առաջինը պիտի հանդիսանան կոլանտեսութեանների, կոմսոլանների, հողի միասնական մշակման ընկերութեանների և այլ

կոոպերատիվ գյուղատնտեսական միացումների կազմակերպման գործում: Անասնապահական շրջաններում բջիջներն ամեն կերպ պետքն աջակցեն կաթնատնտեսության հանրաշնայցման և կաթնալին ու անասնապահական ընկերությունների ամման գործին: Միաժամանակ անհրաժեշտ է բջիջների ուշադրությունը դարձնել չքավոր և միջակ անհատական տնտեսությունների կուլտուրական հետաձուգության հաղթահարության վրա (ներմուծելով ավելի արժեքավոր, բայց թեթև աշխատանք պարունակող (трудоемкий) կուլտուրաներ և այլն):

Գյուղական բջիջների առաջ խնդիր դնել՝ կոմյունիտական կոլտնտեսների միջոցով ընդհուպ մոտենալ մասնակցելու կոլտնտեսությունների տնտեսական կյանքին, աջակցելու նրանց կազմակերպչական ամրապնդմանը, շահավետության և ապրանքայնացման բարձրացմանը, կոլտնտեսությունների շուրջը կազմակերպելու գյուղացիական լայն հասարակական շարժում, գյուղատնտեսության կոլլեկտիվացման համար:

Կոմիտեներին, զավկոմիտեին և շրջկոմներին անհրաժեշտ է գյուղատնտեսների հետ միասին կոնկրետ միջոցներ մշակել կոմյունիտական բջիջներին մասնակից անելու բամբակադործ տնտեսությունների, խաղողի մշակության, ծխախոտագործության և այլ տնտեսիկական կուլտուրաների զարգացման ասպարիզում, համաձայնեցնելով առանձին շրջանների կոնկրետ պայմանների և հողային ու կոոպերատիվ որդանների ծրագրերի հետ:

Մոտակա ամիսներում կազմակերպվելիք բերքարշավին միջոցներ ձեռք առնել ապահովելու գյու-

ղական բջիջների ուշադրության կենտրոնը, վերադառալ մասսայական կամպանիայի, գյուղբջիջներում պարզաբանելու համար գյուղի սոցիալիստական վերակառուցման խնդիրները:

6. Զբաղմունքային շրջանում ծավալել գյուղական բջիջների աշխատանքները, միևնույն ժամանակ ծավալելով նրանց կուլտուր-տնտեսական աշխատանքները նաև բատրակության շրջանում: Զբաղմունքային մեջ աշխատանքներն անհրաժեշտ է կառուցել տնտեսական կոնկրետ միջոցների շուրջը, այն է՝ վարկերի դասակարգային բաշխումը, կոոպերացման ֆոնդերը, գյուղատնտեսական հարկերի արտոնությունը և այլն, վորպեսզի դրա հիման վրա կարելի լինի բարձրացնել չքավորության քաղաքական ակտիվությունը, զարգացնել նրա դասակարգային ինքնագիտակցությունը և ուժեղացնել նրա դիրքը և ազդեցությունը գյուղի ամբողջ կյանքում:

Բատրակության շրջանում աշխատանքների առաջին տեղը պիտի զբաղեն յերիտասարդ բատրակների աշխատանքի պայմանագրերում ընդգրկելու միջոցները, պայմանագրերի ստուգումը, բատրակության կազմակերպումը, մասսայական աշխատանքների մեջ նրանց ընդգրկումը և այլն:

Միջոցներ ձեռք առնել ուսումնական ձեռնարկություններում (մանավանդ միջնակարգ) ավելացնելու բատրակների և չքավորների ընդգրկումը և հասարակական-խորհրդային կազմակերպությունների միջոցով ապահովել աչդ չքավոր և բատրակ ուսանողության նյութական ոգնությունը: Հանձնարարել կենտրոնին մշակելու չքավոր և բատրակ յերիտասարդության անգրագիտության վերացման խնդիրը:

7. Կազմակերպութեան սոցիալական կազմի խիստ կանոնավորումը մնում է վորպես կարևորագույն խնդիր: Միութեան մեջ ուժեղացնելով բանվոր և բաւարակ ամբողջ յերկտասարդութեան ընտրութեունը և շարունակելով չքավոր յերկտասարդութեան լայն մասսաների ներգրավումը, միևնույն ժամանակ անհրաժեշտ է կորուզել միջոցներ ձեռք առնել հետազգացում ադոտովելուց պաշտպանել միութեան շարքերը:

Նշելով կոմյերիտ կազմակերպութեան առանձին շերտերում հակամիջակային տրամադրութեունների գոյութեունը, անհրաժեշտ է պայքարը ծավալել այդպիսի տրամադրութեունների դեմ ինչպես ԼԿՅՄ ներսում, այնպես էլ բանվորական և գյուղացիական լայն մասսաների շրջանում, ամեն կերպ պարզաբանելով կուսակցութեան լենինյան գիծը միջակի մասին, դիմակազերծանելով հակամիջակային տրամադրութեունների որչեկտիվ տրոցկիստական բնույթը և պայքարելով կուսակցութեան լենինյան գծից ամեն տեսակի շեղումների դեմ:

Աճման գիծը զսպելով միջակների հաշիւին, կոմյերիտմիութեան մեջ ապահովել նրանց այն մասի մատչելիութեունը, վորն ստուգված է հասարակական աշխատանքների և կուլակի դեմ սլաքարելու ասպարիզում և վորը ձգտում է հողագործութեան կողմնակալի ձևերին: Անհրաժեշտ է պայքարը ծավալել դասակարգային թշնամու դեմ միջակի համար, խլելով նրան գյուղի ունևոր-կուլակային վերնախավից, դաստիարակել պրոլետարական վոգով:

8. Կազմակերպութեան մեջ կուսկորիզի լրիվ քանակը և այն, վոր կուսակցութեանը հանձնվող կոմյե-

րիտականների սոցիալմոմ լինում են վոչ սակաւ քանակով ծառայողներ և այլք, ՀԼԿՅՄ Կենտկոմի առաջ խնդիր դնել բանվոր, բաւարակ և չքավոր կոմյերիտականների պատրաստման և կուսակցութեան մեջ փոխադրման միջոցով լավացնել կուսկորիզը և մաքսիմալ չափով սահմանափակել ծառայողների և այլքի փոխադրութեունը:

Հանձնարարել Կենտկոմին Կ. Կուս. Կենտկոմի քննարկմանը դնելու ամբողջ զծով կոմյերիտմիութեան վրա կուսակցական դեկավարութեան սիստեմի և մեթոդների լավացման խնդիրը:

9. Անդրյերկումը նշելով Հայաստանի Կոմյերիտմիութեան հաջողութեուններն ակտիվի սոցիալմի բարելավման ասպարիզում, ընդգծում է, վոր ակտիվի տեսական մակարդակը և գործնական վորակավորումը յետ է մնում կոմյերիտմիութեան աշխատանքների նոր խնդիրներից, վորը լուրջ արգելք է հանդիսանում նոր ձևով աշխատանքների վերափոխման գործում:

Ակտիվի մի մասում գոյութեուն ունեն կազմունի լավատեսութեան տրամադրութեուններ, անսկզբունքայնութեուն, դեռ անբավարար կապ մասսայի հետ, բարենոգութեուն, անփուլթ վերաբերմունք մասսաների խնդրում և պասսիվութեուն աշխատանքի նոր ձևերի նկատմամբ:

Այս բոլորը պարտավորեցնում է վոչ միայն պայքարել այդ տրամադրութեունների դեմ, այլև ոգնութեուն կազմակերպել ակտիվին նրա առորչա աշխատանքների մեջ, զգոն և հաղթի վերաբերմունք ունենալ նրա կարիքներին ու հարցումներին և լավացնել ակտիվի պատրաստման աշխատանքների բովան-

զակությունը: Անդրյերկումը պարտավորեցնում է ՀԿՅԵՄ հենտկոմին, միության աշխատանքների գործնական միջոցների քննության և փորձերի փոխանակության համար պարբերաբար հրավիրել միության ակտիվի խորհրդակցություններ:

Անհրաժեշտ է ակտիվին իրազեկ պահել կուսակցության քաղաքականության առորյա խնդիրներին: Ստորին ակտիվի վերակը բարձրացնելու համար աշխատել կազմակերպել զանազան կուրսեր, մասնավորապես բաժնի և չքավոր. յերիտասարդության համար, և ընդգրկել նրան կուսակցականության ցանցում:

10. Անհրաժեշտ է արտադրական ընթացքը քաշել կոմիտեների աշխատանքներին և կոմիտեի միության կողմից գյուղում տարվելիք աշխատանքի խնդիրների լուծման մեջ, բանվոր, բաժնի և չքավոր յերիտասարդության միջից վճռականորեն առաջ քաշել ակտիվի նոր կազմեր կոմիտեներում դեկավարող աշխատանքների համար:

Պաշար կազմակերպել կազմակերպության դրությունը բարեհոգորեն գնահատելու արամադրությունների և դեկավարության ու կազմակերպության ու աշխատանքների թերությունները քողարկելու դեմ: Հեկավարությունից հեռացնել այն ակտիվիստներին, վորոնք կապված չեն յերիտասարդական մասսաների հետ և վարակված են աշխատանքի բյուրոկրատիկ պրիմներով:

11. Հեկավարության և աշխատանքի սխառմի վերակազմության խնդիրներին առաջվա պես ամբողջ կազմակերպության համար պետք է հիմնականը համարել: Անհրաժեշտ է ապահովել մասսաների հետ ակ-

տիվի որդանական կապի հետագա բարելավումն և ընթացքների աշխատանքներին կոմիտեների ավելի լաչն գործնական ոգնությունը նոր ձևի աշխատանքի ցուցմունքների միջոցով՝ հատուկ խրախուսելով և զարգացնելով աշխատանքի այնպիսի ձևերը, ինչպիսին են մասսաների կամավորականությունը, նախաձեռնող խմբակների զարգացումն ու խրախուսումը:

Ստեղծել ավելի մեծ հնարավորություններ մասսաների անվախ քննադատության համար, ապահովել առորյա վերահսկողությունը և բալլչեիկյան քննադատությունը վարից. սրա հիման վրա պաշարել բոլոր թերություններին և հիվանդոտ յերեռլթներին դեմ ինչպես ՀԿՅԵՄ ներսում, այնպես էլ ամբողջ աշխատավոր յերիտասարդության մեջ, կոնկրետ գործողություններով ամբացնել ինքնաքննադատությունը և զգոն, ուշադիր վերաբերմունք ստեղծել քննադատողների նկատմամբ:

Այսպիսիք են ՀԿՅԵՄ զարգացման հիմնական խնդիրները:

ՀԿ (Բ) ԿԿԿ ՅԵՎ ԿՎՀ ՄԻՍՑՅԱԼ ՊԼԵՆՈՒՄԻ ԲԱՆԱ-
ՋԵՎԸ ԿՈՄՍՈՄՈՒԼԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՆԿԱՌՈՒՄՆԵՐԸ ՅԵՎ ԴՓՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ամբողջ ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման անցնելը, վորը զուգակցվում է մեր եկոնոմիկայի սոցիալիստական սեկտորի ուժեղ առաջխաղացման, մասնավոր կապիտալիստական սեկտորի վրա և վերջինիս ակտիվ ընդդիմադրությամբ,

դասակարգային պայքարի սրումը յերկրում, յերիտասարդության քաղաքական, կուլտուրական և տնտեսական պահանջների աճումը կոմյունիստական առաջ դնում են առանձնահատուկ դժվարություն և քաղաքական կարևորություն ունեցող խնդիրներ, վերոնք են.

ա) Միության բջիջների վճռական շրջադարձն ալիւլի ակտիվ կերպով մասնակցելու սոցիալիստական շինարարությանը բոլոր բնագավառներում, միության աշխատանքը համարձակորեն և արագութեամբ նոր ձևով կազմակերպելը:

բ) Սոցիալիզմի կուլտուրական շինարարներին նոր թարմ կադրեր առաջ քաշելը և նրանց իսկական պրոլետարական կոմունիստական դաստիարակութունը:

գ) Միության մեջ պրոլետարական կուսակցական կորիզի ապահովումը:

դ) Միության ղեկավարության բարելավումը ներմիութենական դեմոկրատիայի և ինքնաքննադատության լայն ծավալման հիման վրա:

ե) Կոմսոմոլի քաղաքական դիրքերի ամրացումը և նրա ազդեցության ընդարձակումն անկուսակցական բանվորա-գյուղացիական յերիտասարդության վրա:

Միության աշխատանքի անցած շրջանը (կոմյունիստական նոր ղեկավարության ժամանակ) անցել է հենց վերոհիշյալ խնդիրների լուծման նշանաբանի տակ, վերոնք դրվել են կազմակերպության առաջ սոցիալիստական շինարարության ամբողջ ընթացքով ՀԿ(Բ)Կ Կենտկոմի և ԿՎՀ-ի պլենումը նշում է, վոր միութենական ղեկավարության ճիշտ բալլշխիկյան դժի

շնորհիվ, քաղաքական և տնտեսական կամպանիաներին ակտիվ մասնակցութիւն ցույց տալու հետևանքով, թուրքլիզմի ֆապրրիներին, ալ թեքման և հաշտվողականության դեմ ուղղված պայքարի, ինքնաքննադատության ծավալման և միութենական աշխատանքի նոր ձևերի անցնելու հետևանքով Հայաստանի կոմսոմոլն արդեն ունի նկատելի հաջողութիւններ և նվաճումներ:

Այնպիսի կարևոր և մասսայական կամպանիաներ, ինչպիսիք են — կազմակերպության սոցիալական կազմի սուբյուդումը, բանվորների և բաւարակների ներգրավումը միության մեջ, մասնակցութիւնը խորհուրդների վերընտրության և կոլլեկտիվ պայմանագրերի վերականգման կամպանիային, կուլտարշավը, բերքաբաշակը, սոցիալիստական արցութիւնը, պայքարը հանուն անաղարտ լենինյան իդեոլոգիայի, — ամրապնդել են, Հայաստանի կոմսոմոլի դիրքը ու նրա քաղաքական ազդեցութիւնն անկուսակցական բանվորա-գյուղացիական յերիտասարդության վրա, նրան ալիւլի սերտորեն համախմբելով կուսակցության և նրա ընդհանուր գծի շուրջը:

ԱՆԽԱՏՆԵՐԻ ԹՈՒՅՈՒՆ ԿՈՂՄԵՐԸ

Կոմյունիստական կազմակերպութիւնների աշխատանքում դեռևս դուրսիւն ունեցող լուրջ թերութիւնները (յերիտասարդության մասսաների քաղաքաստության անբավարար դրվածքը, աշխատանքի նոր ձևերին անցնելու դանդաղութիւնը, բջիջների տնտեսական աշխատանքի պակասավոր վիճակը, դպ-

բոցական շինարարութեանը մասնակից լինելու գործի դեռ ելի անբավարար կազմակերպումը, թույլ աշխատանքը անկազմակերպ չերիտասարդութեան շրջանում, թույլ աշխատանքը ազգային փոքրամասնութիւնների չերիտասարդութեան շրջանում և այլն)՝ մի կողմից, մեր չերկրի կուլտուր. կենցաղային և տնտեսական հետաձայնութիւնը՝ մյուս կողմից Հայաստանի ԼԿՅԵՄ-ի առջև են դնում իր բովանդակ եյութեամբ աշխատանքի հետագա բարեկաման և կազմակերպութեան ամբողջման խնդիրը, այն զիրեկտիվներն իրագործելու համար, վորոնք դրված են բանվոր դասակարգի առջև կուսակցութեան 16 ըզ կոնֆերենցիայի կողմից:

ԿՈՄՍՈՒՆԻԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՓՐՈՆՏՈՒՄ

Յերիտասարդութեան մասնակցութեան ուժեղացումը տնտեսական շինարարութեան, արդյունաբերութեան ուսցիոնալիզացիայի, ինքնարժեքի իջեցման, աշխատանքի արտադրողականութեան բարձրացման, աշխատանքին կուլտուրական վերաբերմունք ցույց տալու, անհատական, չքավոր և միջակ տնտեսութիւնները կոլլեկտիվացման և կոոպերացման չինթարկելու, զշուղի մեքենացման, գյուղատնտեսութեան կուլտուրայի բարձրացման, բերքատուութեան բարձրացման և ցանքերի տարածութեան ընդարձակման գործում պիտք է կազման միութեան բշիջների աշխատանքի հիմնական բովանդակութիւնը: Այս հիմնական խնդիրներից պիտք է ըղխի և նրանց հիման վրա կառուցվի կոմյերիտմիութեան բշիջի ամբողջ աշխատանքն ինչպես քաղաքում, նույնպես և զգուղում:

Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմի և ԿՎՀ միացյալ պլենումն առաջարկում է ԼԿՅԵՄ Կենտկոմին բոլոր միջոցները ձեռք առնել միութենական մասսայի և անկուսակցական աշխատավոր չերիտասարդութեան հասարակական կարծիքը մոբիլիզացիայի չենթարկելու միութեան տնտեսական խնդիրների շուրջը, ծավալել բանվորա-զշուղացիական չերիտասարդութեան մասնաներին ժողովրդական տնտեսութեան վերակառուցման գործի մեջ գրավելու մասսայական ձեերը (արշավներ, մրցութիւններ, մրցականչեր, շարաթորչակներ, կոնկուրաներ և այլն):

Կոմյերիտմիութեան մեջ լեհիւնյան գծից կատարվող առանձին տատանումների և թեքումների իրողութիւնը մի կողմից, կոմյերիտ մասնաների, մանավանդ ակտիվի տեսական պատրաստակաւութեան յետմալը՝ մշուս կողմից, առանձնապես կարեւոր են դարձնում գործնականի կապը տեսականի հետ, չերիտասարդութեան վճռական ընդհուպ մերձեցումը թեորիային և այդ թեորիային տիրապետելուն:

ՀԿ(բ)ԿԿ և ԿՎՀ միացյալ պլենումը հանձնարարում է ԼԿՅԵՄ Կենտկոմին և Կ(բ)Կ Կենտկոմի Ագիտպրոպ բաժնին մեկ ամսվա ընթացքում մշակել կոնկրետ ձեռնարկումներ կոմյերիտմիութեան, առանձնապես նրա ակտիվի քաղաքատիրակութեան գործնարամատապես բարեկամելու վերաբերյալ:

ԿՐԿՐ ԿԵՆՏՐՈՆԱՅԵՆԸ ԱՋ ԹԵԿՄԸՆ ԳԵՄ

Կոմյերիտմիութեան ունեցած հաջողութիւններն իղեղողիական Փրոնտում դեռեւս անբավարար են: Պաշարն ալդ Փրոնտում առաջվա նման պիտք է

կանգնած լինի կոմյերիտմիութեան յուրաքանչյուր կազմակերպութեան ուշադրութեան կենտրոնում: Անհրաժեշտ է կրակը կենտրոնացնել զլիսավորապես ընդդէմ աջ թեքման, նրա նկատմամբ հաշմանդակաւ վերաբերմունքի, սակայն ամենեւին չթուլացնելով պայքարը հակահեղափոխական տրոցկիզմի, նացիոնալիզմի, կրոնի և հակակոմունիստական լիւրիստսարդական կազմակերպութիւններին և խմբակներին դէմ:

Կոմսոմոլն ամրապնդելով պայքարն աշխֆրոնտում, միաժամանակ պետք է ուժեղացնի իր ազդեցութիւնն անկուսակցական աշխատավոր լիւրիտասարդութեան վրա, առանձին ուշադրութիւն դարձնելով սովորող լիւրիտասարդութեանը, վերջի վրա կոմսոմոլի ազդեցութիւնը դեռևս թույլ է, նրանց մեջ կազմակերպելով մասսայական աշխատանք և ներգրավելով նրանց հասարակական աշխատանքի:

ԻՆՏԵՐՆԱՅԻՆԱԼԻԶՄԻ ՀԱՄԱՐ

ԼԿՅԵՄ-ի և աշխատավոր լիւրիտասարդութեան ինտերնացիոնալ դաստիարակութեանը վերաբերող աշխատանքը դեռևս բավականաչափ ծավալւած չէ և չի ընդգրկում միութեան շինարարութեան բոլոր բնագավառները:

Կենտկոմի և ԿՎՀ-ի պլենումը հրավիրում է միութեան ուշադրութիւնը ինտերնացիոնալիզմի պրոպագանդի խորացման, այդ ուղղութեամբ մի շարք ձեռնարկումների մշակման և կիրառման անհրաժեշտութեան վրա (փորձի փոխանակութիւն Անդրկովկ, կոմյերիտ կազմակերպութիւնների միջև, Էքսկուրսիաներ, հատուկ խմբակներ հարեմալ լիւրիտասարդական

հանրապետութիւնների լիւրիտասարդական շարժման պատմութիւնն ուսումնասիրելու վերաբերյալ, ՄՈՊՐ-ի բջիջներ, շեֆութիւն, «Ինտերնացիոնալ գրիվներնիկ» (միջազգային անդամավճար), ուսուց լեզվի ուսումնասիրութիւն և այլն): Ինտերնացիոնալ դաստիարակութեան խորացումը պետք է ընդգրկի կոմյերիտական աշխատանքի բովանդակ սիստեմը: Պլենումը հանձնարարում է Հայաստանի ԼԿՅԵՄ-ի Կենտկոմին մշակել կոնկրետ ձեռնարկումներ ինտերնացիոնալ պրոպագանդի վորակը բարելավելու վերաբերյալ և հարցը մտցնել Կենտկոմի նախագահութիւն:

Կենտկոմի և ԿՎՀ-ի պլենումը նշելով ՀԼԿՅԵՄ նվաճումները բանվորներին և բատրակներին միութեան մեջ գրավելու ուղղութեամբ (1929 թ. մայիսի 1-ին պրոլետարական կորիզը միութեան մեջ կազմում է 38,1 տոկոս, 1928 թվի 25,8 տոկոսի դիմաց), առաջարկում է հետագայում ավելի ուժեղացնել միութեան պրոլետարական կորիզը, ամբողջ բանվոր և բատրակ լիւրիտասարդութիւնը միութեան մեջ գրավելու ճանապարհով:

Աղջիկների հաշվին կատարւած աճման համեմատական թուլութեան (կազմակերպութեան 12,5 տոկոսը) հետևանքով անհրաժեշտ է մի շարք կոնկրետ միջոցներ մշակել՝ ուժեղացնելու համար նրանց հոսանքը դեպի միութիւնը:

Անբավարար համարելով կոմսոմոլի կուսակցական կորիզը (7,2 տոկ., վորոնցից մեծ մասը մեծահասակներ), Կենտկոմի և ԿՎՀ պլենումը հանձնարարում է ԼԿՅԵՄ Կենտկոմի և ՀԿ(Բ)Կ Կազմբաժնին գործնական միջոցներ մշակել՝ բարձրացնելու կուսակցական

կորիզի տոկոսը կոմսոմոլի մեջ: Բոլոր կուսակցական բջիջները պետք է ուժեղացնեն կոմյերիտականներին կուսակցութեան մեջ ընդունելու աշխատանքը, գլխավորապես միութեան պրոլետարական կորիզից:

ՊԵՅՐԱՐ ՆՈՐ ԿԱԳՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Պլենումն ընդգծելով միութեան աշխատողներին նոր կադր առաջ քաշելու և միութեան վճարովի ակադիմի կադրի բանվորականացման ուղղութեամբ ձեռք բերված հաջողութիւնները (ակադիմի մեջ բանվորական տոկ. բարձրացել է 33,7-ից 55-ի, ծառայողներին իջել է 53,4-ից 26,7-ի), միաժամանակ մատնանշում է կոմյերիտականներին տնտեսական, խորհրդային, կոոպերատիվ և պրոֆմիութենական աշխատանքի ներգրավելու նախապատրաստութեան աշխատանքի թուլութիւնը և գտնում է, վոր խորհրդային, տնտեսական, կոոպերատիվ և պրոֆմիութենական որդաններում միութեան բանվորական ու բարակային կազմից կոմյերիտական նոր կադր առաջ քաշելու խնդիրը պետք է կարեորագուցն տեղ գրավի կոմյերիտական կազմակերպութիւնների աշխատանքի մեջ:

Աշխատանքն աղջիկների շրջանում մինչև այժմ բավարար բարձրութեան վրա չի դրված: Կանանց ազատագրման հարցերը—հին կենցաղի փափոքներին դեմ, չաղբա կրելու, տգիտութեան, անգրագիտութեան դեմ պայքարելու հարցերը—դեռևս չեն դարձել միութեան բոլոր բջիջների սեփականութիւն: Պլենումը բոլոր կոմյերիտական կազմակերպութիւններին ուղարկութիւնը հրավիրում է աշխատանքի այս բնագավառի վրա և առաջարկում է լայն ծավալել աշխա-

տանքն աղջիկների շրջանում, ապահովելով ուշադիր և ընկերական վերաբերմունք նրանց նկատմամբ:

ԱՎԵԼԻ ՄԵԾ ՈՒՅԵԳՐՈՒԹՅՈՒՆ

Կուսակցական ղեկավարութիւնը կոմյերիտամիութեան նկատմամբ, վորը հանդիսանում է միութեան կոմսոնիստական ճանապարհով զարգանալու հիմնական նախապայմանը, մինչև այժմ զգալի թերութիւններ ունի: Իսկ միութեան զարգացման ներկա շրջանը (յերիտասարդութեան համար մղվող պայքարի սրումը, աշխատանքի նոր սխտեմը) պահանջում են կուսակցական ղեկավարութիւնից ավելի պատասխանատու և զգայուն մոտեցում դեպի միութիւնը:

Հայաստանի Կ(Բ)Կ Կենտկոմի և ԿՎՀ պլենումն ամբողջ լրջութեամբ Հայաստանի կուսակցական կազմակերպութիւնների տուայ զննելով կոմյերիտամիութեան կուսակցական ղեկավարութեան խնդիրը, առաջարկում է.

ա) վերանայել կոմյերիտամիութեան կուսակցական ղեկավարութեան ամբողջ սխտեմը, այն վճարահանորեն բարելավելու համար, ուշադրութեան կենտրոնում դնելով ստորին միավորը—բջիջը, ուր առանձնապես շատ են շեղումները և զեֆեկտները:

բ) Կոմյերիտամիութեան մեջ աշխատելու, առաջ քաշել ամենապատրաստված և կայուն կոմսոնիստներին (կցվածները):

գ) Ավելի հաճախ կուսակցական ժողովներում լսել կոմյերիտական կազմակերպութիւնների ղեկուցումները և քննել հիմնական հարցերը:

դ) Ինկատի ունենալով կուսակցական և կոմյե-

ըրտական բժիշների ցանցի անհամապատասխանութիւնը, առանձնապէս գլուղում, անհրաժեշտ է բոլոր այն կոմիտեիտական բժիշներին, վորտեղ չկան կոմբը-շիշներ, կցել կուսակցականներ ուրիշ բժիշներին:

Պիւնուսն առաջարկում է ուժեղացնել կոմիտեիտ-միութեան կոմիտեների ղեկավարութիւնը դպրոցա-կան բժիշների վրա և ուժեղացնել հենց իրենց՝ դպրո-ցական բժիշների աշխատանքը ուսանող չերիտասար-դութեան շրջանում այնպիսի ուղղութեամբ, վորպէսզի այդ աշխատանքն ընդգրկի դպրոցական կյանքի բո-լոր կողմերը, նրա շինարարութիւնը, աշակերտ-ու-սանողների կոմմունիստական դաստիարակութիւնը, միաժամանակ վոչ մի դեպքում թույլ չտալով, վոր կոմիտեիտմիութեան բժիշների կողմից կիրառվեն վար-չական մեթոդներ դպրոցներում:

ՆԱԸՃԵԼ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐՈՒՆՔՆԵՐԸ

Նշելով ժողովրդական կրթութեան առանձին ուղակներին վորոշ կտրվածութիւնը սոցիալիստական շինարարութիւնից, պիւնումը հանձնարարում է ԼԿՅԵՄ-ի Կենտկոմին ամենաշեղանդուն մասնակցութիւն ունե-նալ ժողովրդական կրթութեան սիւստեմը վիրանալով ուսանողներին աշխատանքում այնպէս, վոր առաջիկա խորհրդակցութեան մեջ այդ հարցն ստանա իր վերջնական լուծումը:

Պիւնուսն առաջարկում է ԼԿՅԵՄ-ի Կենտկոմին Լուսժողովրդատի հետ միատեղ մատնանշել մի շարք այնպիսի գործնական ձեռնարկումներ, վորոնք ուղղ-ված են բանվորներին և բատրակներին յերկրորդ աս-տիճանի դպրոցները, տեխնիկումները և ԲՈՒՀ-երն ընդ-

դրկելու պործի ուժեղացմանը: Լուսժողովրդատն իր բյուջեյում նախատեսելու չէ անհրաժեշտ միջոցներ դասընթացներ կազմակերպելու, բանվորներին և բա-րակներին նախապատրաստելու և վերապատրաստելու բարձրագույն և միջնակարգ կրթական հաստատու-թիւնների համար, այլև նյութական աջակցութիւն ցուց տալու ուսանողների պրոլետարական տարրե-րին, նրանց ապահովութիւնն ապով, վորպէսզի նախա-վորութիւնն ունենան իրենց կրթութիւնն ավարտելու:

ՈՒՃԵԳՐՈՒԹՅՈՒՆ ՅԵՐՐՈՐԴ ՍԵՐՆԴԻ ԴԱՍՏԻԱՐԿՈՒԹՅԱՆԸ

Նշելով պիոներական կազմակերպութեան աշխա-տանքի մեջ ձեռք բերված վորոշ հաջողութիւնները, պիւնուսն ընդգծում է կոմիտեիտական ստորին ակտի-վի վորոշ մասում չեղած թերագնահատող վերաբեր-մունքը յերեխաների դաստիարակութեան նկատմամբ, պիոներական կազմակերպութ. թույլ դեկավարութիւ-նը կոմսոմոլի բժիշների կողմից, ստորին կուսակցա-կան և խորհրդային կազմակերպութիւնների անբա-վարար ուշադրութիւնն այդ աշխատանքին: Պիւնումը հանձնարարում է կուսակցութեան և կոմսոմոլի բոլոր կազմակերպութիւններին կոնկրետ միջոցներ ձեռք առնել բարեկամելու համար պիոներական կազմակեր-պութեան ղեկավարութիւնը, ամրապնդելու նրա նյու-թական բազան, բարձրացնելու կոմիտեիտական կորի-զի տոկոսը պիոներական կազմակերպութիւնների մեջ, կուսակցականների և կոմիտեիտականների պատ-րաստված կազմեր կցելու պիոներական կազմակեր-պութեանը:

Պիոներական կազմակերպութեան աշխատանքի չայլԼԿՅԵՄ VI համագումար—4

հյական պակասություններէց մեկը հանդիսանում է նրա ղեկավարների կազրի թուլլ նախապատրաստումը: Պլենումը նշում է, վոր ստորին և ղեկավարող պիտներական ակտիվի պատրաստումը չեւ է մնում յերեխաների աճող պահանջներէց և առջարկում է կուսակցական և կոմյերիտական կազմակերպություններին լուրջ ուշադրություն դարձնել պիտներական ակտիվի պատրաստման վրա:

ՀԱՐՎԵԾ ՀԱԿԱՄԻՋԱԿԱՅԻՆ ՏՐԱՄԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Պլենումը նշում և վճռականապես դատապարտում է միջակի գերի թերազնահատության վորոշ տրամագրությունները կոմյերիտական կազմակերպությունների մեջ: Պլենումն առաջարկում է ՀԼԿՅՄ Կենտկոմին վճռական պայքար տանել հակամիջակային տրամագրությունների դեմ միության ներսում, բացատրելով կազմակերպությանը կուսակցության քաղաքականությունը միջակի նկատմամբ: Անշեղորեն իրագործելով կուսակցության քաղաքականությունը միջակ գշուղացիության նկատմամբ, անհրաժեշտ է միաժամանակ ապահովել բոլոր կոմյերիտական բջիջների կողմից դասակարգային գծի պարզորոշ կիրառումը հոգուտ չքավորության և բատրակության շահերի:

Կոմսոմոլի գշուղական բջիջների ուշադրությունը պետք է կենտրոնացվի հետևյալ խնդիրների վրա.

ա) Գործնական պրոպագանդ մղել հոգուտ կուլեկտիվ տնտեսությունների շարժման և առհաստակ կուլեկտիվիզմի գաղափարների, կուլեկտիվ կերպով մշակելով, կուլեկտիվ կերպով հավաքելով հունձը, մին-

չև կուլեկտիվ տնտեսություն կազմակերպելը, և անխնա պայքար մղելով կուլեկտիվ տնտեսությունների շարժման նշանակությունը և կարեւորությունը թերագնահատող տրամագրությունների դեմ:

բ) Կուլտուրական, լուսավորական, դաստիարակչական աշխատանքի կազմակերպումը խրճիթ-ընթերցարանում, կազմակերպել զանազան խմբակների, անգրագիտության վերացումը, զրուցներ, ցուցադրական դատեր, ռադիո, հոկտեմբերականներ, հակակրոնական աշխատանք և այլն:

գ) Ճանապարհային և ջրային շինարարության աշխատանքի ծավալումը, կամուրջների, ճանապարհների նորոգումը, առուների անցկացումը, պայքարը հեղեղումների դեմ և այլն: Խորհրդային գշուղի կուլտուրական ուժերն (ուսուցիչ, ագրոնոմ, բժիշկ և այլն) ոգտագործելու ուղղությամբ կատարվող աշխատանքի ուժեղացում և աշխատավոր ինտելիգենցիայի նկատմամբ արհամարհական վերաբերմունք ցույց տալու չերևութների դեմ մղվող պայքարի ուժեղացումը:

դ) Խորհրդային և հասարակական աշխատանքին (խորհուրդներ, կոոպերացիա, կամավոր հասարակական կազմակերպություններ) ցույց տրվող կազմակերպչական մասնակցության վորակի բարձրացումը:

ԲԱՐՁՐԱՑՆԵՔ ՅԵՐԻՏԱՄԱՐԻՈՒԹՅԱՆ ԽԱՉՄՈՒՆԿՈՒԹՅՈՒՆԸ

Նշելով վորոշ նվաճումներ ռազմա-ֆիզկուլտուրային աշխատանքում (պարտադիր ռազմական ընդհանուր ուսուցման ճիշտ դրվածքը՝ կոմյերիտմիության անդամների համար, նշանաձիգ մրցությունների կատարում, ռազմական ճամբարների կազմակերպում,

կապի հաստատում կարմիր բանակի հետ, ֆիզկուլտուրական կազմակերպությունների աճումը և այլն)՝ պլենումը նշում է միաժամանակ, վեր միության շարքերի ռազմականացումը շատ դանդաղ է ընթանում, վորը հիմնականում բացատրվում է Հայաստանի կոմյերիտմիության ակտիվի կողմից դեպի այդ աշխատանքը ցուցաբերված անթույլատրելի, անպատասխանատու վերաբերմունքով, ուստի և առաջարկում է վճռական միջոցներ ձեռք առնել այդ աշխատանքն ուժեղացնելու համար: Ուժեղացնել դեկավարությունը ֆիզկուլտուրայի նկատմամբ՝ դարձնելով այն աշխատավոր չեքիտասարդության կուլտուր-փաղաքական և ֆիզիկական դաստիարակության մասնաճյուղ: Կազմակերպություն: Ֆիզկուլտուրան առաջ մղել դեպի գյուղը, առաջին հերթին կոլտնտեսական չեքիտասարդության շրջանում: Նշելով նյութական բազայի պակասավոր լինելը, վորպիսի հանգամանքը հիմնական արգելք է հանդիսանում մասսայական ֆիզկուլտուրական շարժմանը Հայաստանում, պլենումն առաջարկում է համապատասխան որդաններին անհրաժեշտ նյութական բազա հատկացնել ֆիզկուլտուրայի համար 29—30 նոր բյուջետային տարվանից:

Պլենումն արձանագրում է չեքիտասարդության պրոֆտեխնիկական կրթության ասպարիզում կատարված աշխատանքի թուլությունը:

Պլենումն առաջարկում է ՀԼԿՅՄ Կենտկոմին և Լուսժողկոմատին ամենակարճ ժամանակամիջոցում բանվոր չեքիտասարդության պրոֆտեխնիկական կրթության գործը լավագույն զբաղման հասցնել, պրոֆտեխնիկական կրթության, արհեստակցական ուսում-

նական հաստատությունների, ֆաբրիկաների մասնայական ցանցն ընդարձակելու միջոցով (մանածագործ. և հանք. արդ. ուս.): Միաժամանակ միջոցներ ձեռք առնել գյուղացիական չեքիտասարդության գյուղատնտեսական նախապատրաստության համար, առաջին հերթին կոլտոգնիկներին:

Կոմյերիտմիության կատարած աշխատանքի նկատելի աշխուժությունն ազգային փոքրամասնությունների շրջանում ելի անգոհացուցիչ է և չի կարող բավարարել ազգային փոքրամասնությունների չեքիտասարդության պահանջները, ուստի և կոմյերիտ. կազմակերպությունների ուշադրությունն անհրաժեշտ է կենտրոնացնել ազգային փոքրամասնությունների շրջանում կատարվելիք աշխատանքի հետագա ուժեղացման վրա: Անհրաժեշտ է՝

ա) ազգային փոքրամասնությունների ռադոններն ապահովել դեկավար աշխատավորների կազմով:

բ) պատրաստել և վերապատրաստել ազգային փոքրամասնությունների ակտիվը, վորի համար կազմակերպել հատուկ դասընթացներ:

գ) ուժեղացնել ազգային փոքրամասնությունների աշխատավոր չեքիտասարդության հոսանքը դեպի միությունը և նրանց ներգրավումը արտադրության, կոլտնտեսությունների, կոոպերատիվների մեջ և այլն:

դ) առանձին ուշադրություն դարձնել ազգային փոքրամասնությունների չեքիտասարդության կոմմունիստական դաստիարակության վրա, նրանց ապահովելով բավականաչափ կուսդպրոցներով, լիկկայաններով, խմբակներով, ազգային փոքրամասնությունների լեզվով հրատարակված գրականությունը և այլն:

Յ Ո Ւ Յ Ա Կ

ՀԼԿՅԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ ՆՈՐԸՆՑԻՐ ԿԱԶՄԻ

(Ընտրված 6-րդ համագումարում, 17/22 մայիսի 1929 թ.)

1. Կոստանյան Հայկազ
2. Խանջյան Աղասի
3. Ամատունի
4. Ախունդ-Ջադե Զհանգիր
5. Գրիգորյան Գուրգեն
6. Ստեփանյան Աշոտ
7. Հակոբյան Աշոտ
8. Ավագյան Վարդգես
9. Խորունի Տիգրան
10. Թումանյան Հայկուշ Ղազարի
11. Մկրտչյան Ավագ Հովհաննեսի
12. Դարբինյան Հովսեփ
13. Հովհաննիսյան Գրիշա
14. Պարոնիկյան Յերվանդ
15. Ասատրյան Անուշավան
16. Խառատյան Արմենակ
17. Հարությունյան Մելիք
18. Հայրապետյան Հակոբ
19. Մարության Խաչիկ
20. Հարությունյան Յերվանդ
21. Մինասյան Մելիտոս

22. Շտիկյան Արշավիր
23. Սրապյան Վաղարշակ
24. Գրիգորյան Յեղիա
25. Նեմեյան Արուսյակ
26. Ալոյսն Արամ
27. Բարսեղյան Լիպարիտ
28. Հասրաթյան Անդրանիկ
29. Պետրոսյան Վարդան
30. Ղարապետյան Գուրգեն
31. Սեդրակյան Գասպար
32. Միքայելյան Խորեն
33. Գաբրիելյան Գևորգ
34. Թազչյան Հրաչ
35. Խաչատրյան Հրաչ
36. Մալին Դմիտրի
37. Պողոսյան Բադալ
38. Բարսեղյան Աղասի
39. Հովհաննիսյան Արուսյակ
40. Գասուարյան Արշավիր
41. Աղաբեգյան Ռուբեն
42. Սիլբանյան Արշակ
43. Ղազախեցյան Դրո
44. Բադալյան Սարգիս
45. Հարությունյան Արամ
46. Անտոնյան Միշա
47. Մովսեսյան Հովհաննես
48. Մարության Գուրգեն
49. Սիմոնյան Բաբկեն
50. Ավետիսյան Հայրո
51. Հարությունյան Յեղիշե

52. Յեղիազարյան Գրիշա
53. Մուշեղյան Անդրանիկ
54. Մուրադյան Հայրիկ Մանուկի
55. Ղազարյան Նինել
56. Մանուկյան Յեղիազար
57. Կարճիկյան Մուկուչ Վահանի
58. Հարությունյան Շավարշ Արրահամի
59. Փանյան Շաքրո
60. Իսկանդարյան Զորան
61. Բաղալյան Վոսկան Հակոբի
62. Գրիգորյան Մանուկ Առաքելի
63. Իրզայե Իրզա Աբիր-ողլի
64. Սարգսյան Խաստուր
65. Մարտիրոսյան Վարդգես Մուշեղի
66. Ավետիսյան Հայկազ
67. Մահմեդով Զիադ
68. Սեկոյան Խաչիկ
69. Սարգսյան Արմենակ
70. Հովհաննիսյան Թորգոմ
71. Միրզոյան Գուրգեն
72. Վոլկովա Տատիանա
73. Մամեդով Ուսուր
74. Ազիմով Միխայիլ
75. Ալիև Ալի

Թ Ե Կ Ն Ա Ժ Ո Ի Ն Ե Ր

1. Խաչատրյան Մուշեղ
2. Զաֆարով Վալի
3. Առաքելյան Խաչիկ
4. Արրահամյան Արտաշես

5. Մանուկյան Ամալիա
6. Նալբանդյան Սիմոն
7. Շամանով Ալեքսան
8. Անանյան Վախտանգ Ստեփանի
9. Մարկով Յակով Միխայիլ
10. Գրիգորյան Անդրանիկ
11. Այվազյան Հակոբ
12. Նալբանդյան Աբամ
13. Ղազարյան Վադո
14. Ասատրյան Շուշիկ
15. Կարապետյան Յերվանդ
16. Սահակյան Բադե Կարապետի
17. Մարկոսյան Մանուկ Գևորգի
18. Գևորգյան Մինաս
19. Գևորգյան Արտաշես
20. Պետրոսյան Մարիկո
21. Խաչատրյան Գևորգ
22. Նովիկովա Տամարա
23. Մահմեդով Շամիլ
24. Իմամ Ալիև Բահուլ
25. Հաջոյան Զավահիր
26. Մարգարյան Ավետիս
27. Փարսադանյան Հովակիմ
28. Արզումանյան Հմայակ
29. Շահնազարյան Վարսիկ

ՌԵՎԻԶԻՈՆ ԿՈՄԻՍՍԻՆ

1. Գևոնյան Քերոբ
2. Դաբրիելյան Պետրոս

3. Թումասյան Թումաս
4. Մուրադյան Արսյուշ
5. Ազիմով Մահմեդ
6. Վարդանյան Սոֆիա
7. Թունյան Սմբատ
8. Առաքելյան Շավարշ
9. Ոհանջան Անդրանիկ
10. Նազիրով Իսմայիլ
11. Փաշինյան Արամ

Ց Ա Ն Կ

ԵՂ

1. Բանաձև 16-րդ կուսկոնֆերանսի արդյունքների մասին, ընդունված ընկ. Ս. Սարգսյանի զեկուցման առթիվ 3
2. Բանաձև ՀամԼԿՅԵՄ Անդրյերկոմի գործունեության մասին, ընդունված ընկ. Ախունդ-Ջադեյի զեկուցման առթիվ 6
3. ՀայԼԿՅԵՄ ԿԿ-ի զեկուցման առթիվ ընդունված բանաձևը 10
4. Կոմյերիտմիության խնդիրները իդեոլոգիական ֆրոնտում (բանաձև, ընդունված ընկ. Ամատունու զեկուցման առթիվ) 28
5. Կոմյերիտմիության անելիքները գյուղի սոցիալիստական վերակառուցման գործում 58

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

- ա) ՀամԼԿՅԵՄ Կենտկոմի և Անդրյերկոմի վորոշումների կատարման ստուգման մասին՝ բանաձև, ընդունված ՀամԼԿՅԵՄ Կենտկոմի զեկուցման առթիվ 76
- բ) ՀԿ (բ.) ԿԿԿ և ԿՎՀ-ի միացյալ պլենումի բանաձևը կոմսոմոլի աշխատանքների մասին 87
- գ) ՀԼԿՅԵՄ Կենտկոմի և Վերստուգիչ Հանձնաժողովի նորընտիր կազմը 102



ՀՀ Ազգային գրադարան



NL0189181

Резолюции и постановления
VI с'езда ЛКСМА.



ԳԻՆԸ 40 Կ.

